

**ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՆԱԶԵԼԻ ԳԱՌՆԻԿԻ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՌՐ**

ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մոնիցինգայա, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՍԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2020**

**РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ**

**СУКИАСЯН НАЗЕЛИ ГАРНИКОВНА**

**ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ФИНАНСОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ В  
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**АВТОРЕФЕРАТ**

диссертации на соискание ученой степени доктора юридических наук по специальности 12.00.02 – Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

**ЕРЕВАН - 2020**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝  
իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր **Ն.Ա. Աստոնովա**  
իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր **Ա.Ս. Ղամբարյան**  
իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր **Յ.Ս. Դերձյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
, իրավունքի հիստորիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թ. հուլիսի 6-ին Ժ.  
11:00-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագի-  
տական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հ. Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարա-  
նի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2020 թ. մայիսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  
իրավաբանական գիտությունների թեկնածու

  
Յ.Յ. Գրայրապետյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор  
**Н.А. Антонова**  
доктор юридических наук, профессор  
**А.С. Гамбарян**  
доктор юридических наук, профессор  
**Г.М. Дерцян**

Ведущая организация: **Институт философии, социологии и права  
НАН РА**

Защита состоится 6 июля 2020 г. в 11<sup>00</sup> часов на заседании специализированного  
совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г.  
Ереван, О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников  
библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 26 мая 2020г.

Ученый секретарь специализированного совета  
кандидат юридических наук

  
Ճ.Ճ. Այրապետյան

## ԱՏԵՆԱԿՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՎԳԻՐԸ

**Ատենախոսական հետազոտության արդիականությունը:** Ներկա ժամանակաշրջանում ՀՀ առաջնահերթ լուծում պահանջող նպատակներից մեկը՝ իրավական պետության և քաղաքացիական հասարակության ձևավորումն է, որոնց արդյունավետ լուծման առաջին նախապայմաններից մեկը պետության ժամանակակից պահանջներին համահունչ տնտեսական բարեփոխումներն են, որի առանցքը ֆինանսական գործունեության ոլորտում ֆինանսական կարգապահության, վերահսկողության և հսկողության, ֆինանսական պատասխանատվության և վարույթի արդյունավետ արմատավորումն է, որոնք օրինակատվության ապահովման և իրավակարգի ամրապնդման հասարակական և պետական երաշխիքներ են:

Ֆինանսական գործունեության բարեփոխումների պայմաններում անգամ ֆինանսական իրավախախտումները շարունակում են պահպանվել, որոնք կապված են ֆինանսական համակարգի, պետական կառավարման անբավարար կազմակերպման, ֆինանսական վերահսկողության համակարգի մարմինների գործունեության պասիվության և թողտվության հետ, որոնք բացի սուբյեկտիվ պատճառներից մեծապես պայմանավորված են պետության ֆինանսական գործունեության ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական բազայի անկատարության, գործող իրավական ակտերի ցածր մշակվածության և ֆինանսական համակարգը կարգավորող օրենսգրքերի բացակայությամբ (բյուջետային, ֆինանսական օրենսգրք):

Հետազոտությունները վկայում են, որ ֆինանսական գործունեությունը կարգավորող միասնական օրենսդրության բացակայությունը, առավել ևս գործող իրավական ակտերում ֆինանսական պատասխանատվության և վարույթի սահմանման և կիրառման կարգի շրջանցումները պետության ֆինանսական գործունեության ցանկացած ոլորտում իրենց զգացնել են տալիս, քանի որ ֆինանսական համակարգի յուրաքանչյուր ֆոնդ ունի համապետական, ազգային ֆինանսատնտեսական հզորության ամրապնդման նպատակ, որոնց հասցված վնասը անհնար է լուծել վարչական կամ քրեական ներգործության միջոցներով, քանի որ վերջիններս հանդես են գալիս անհատական կոնկրետ այս կամ այն անձի կողմից հասցված վնասի վերականգնմամբ:

Ավելին, ֆինանսական (հարկային, բանկային, արժույթային, արժեթղթերի) պատասխանատվության, որպես պատասխանատվության առանձին տեսակի, դերը և նշանակությունը անտեսման պատճառով ֆինանսական գործունեության տարբեր ոլորտներում թողտվության և հանցավոր ինքնավստահության հետևանքով օր օրի ավելանում են պետական և տեղական բյուջեներից կատարվող հափշտակությունները, ծնելով իրենց բնույթով նոր «բյուջետային հանցագործություններ»:

ՀՀ-ում իրականացող լայնամասշտաբ տնտեսական բարեփոխումների արդյունավետության ապահովման ամենահուսալի երաշխիքը, գործնական արդյունքների հիման վրա ձևավորվող իրավական նոր հայեցակարգերն են, որոնք մեծամասամբ պետք է նպաստեն և ուղղված լինեն գործող իրավաբանական պատասխանատվության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև պետության տնտեսական գործունեության ոլորտում (ֆինանսական, հարկային, բանկային, արժույթային) ձևավորվող և արագ ընդլայնվող ֆինանսական իրավախախտումների կանխմանը, ֆինանսական հարկադրանքի, պատասխանատվության և վարույթի հիմնախնդիրների գիտական մշակմանը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ հայրենական իրավագիտության ոլորտում ֆինանսաիրավական հիմնախնդիրները դուրս են մնացել հայ իրավագետների ուշադրությունից, հատկապես անտեսված է ֆինանսաիրավական պատասխանատվությանը և վարույթի իրավական կարգավորմանն ուղղված գիտական հետազոտումների անհրաժեշտությունը: ՀՀ-ում ֆինանսական իրավունքի գիտության

և ճյուղի զարգացման շահագրգռվածությունը ինքնին արդիական են դարձնում ֆինանսաիրավական ցանկացած ինստիտուտի հետազոտությունը և գիտական բացահայտումները:

Այսօր, 33-ում հարկային օրենսդրության ցանկացած խախտում, առավել ևս եթե կատարվում է դիտավորությամբ, ուղղված է 33 պետական և համայնքային բյուջեների, որպես պետության ֆինանսատնտեսական ինքնիշխանության հզորության աղբյուրի վնասմանը, ավելացնելով հասարակական մեծ վտանգ ներկայացնող բյուջետային հանցագործությունների բանակը, որոնց տեսակային օբյեկտները բազմազան են, արտահայտվում են՝ 33 և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների մասին օրենքը և որոշումը չկատարելու, բյուջետային միջոցները ոչ նպատակային օգտագործելու, բյուջեների կատարման մասին հաշվետվությունները չներկայացնելու, պետական և համայնքային բյուջեներից մատուցված ծառայությունների համար վճարումների նորմատիվների խախտմամբ, չնախատեսված ծախսերի ֆինանսավորմամբ, բյուջետային միջոցներ տնօրինողների միջոցների հատկացման ժամկետների խախտմամբ կամ մասամբ տրամադրմամբ, ինչպես նաև մի շարք այլ խախտումներ, որոնք ամրագրված են բյուջետային օրենսդրությամբ:

Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովմանը բավարար մակարդակով չեն նպաստում գործող բանկային համակարգը, արժեթղթերի շուկան, ինչպես նաև արտարժույթային ոլորտի իրավական կարգավորման ուղղված օրենսդրական բացերը, որոնք ֆինանսական իրավախախտումների, հատկապես, պատասխանատվության, վարույթի, ֆինանսական ներգործության

միջոցների գործուն համակարգ չեն սահմանում, որի պատճառով պետության ֆինանսական համակարգի բոլոր ոլորտներում օր օրի ավելանում են ֆինանսական իրավախախտումները, հրատապ դարձնելով ֆինանսաիրավական պատասխանատվության և վարույթի կարգավորմանն ուղղված իրավական բարեփոխումները:

Հիշատակված վերլուծություններն ինքնին վկայում են, թե օբյեկտիվորեն որքան մեծարժեք է ժամանակակից իրավունքի տեսության ոլորտում ֆինանսաիրավական պատասխանատվության, վարույթի և հարկադրանքի իրավական բնույթի և իրավաբանական պատասխանատվության համակարգում վերջինիս որպես պատասխանատվության նոր և ինքնուրույն տեսակի ճանաչման հիմնախնդիրների գիտական բացահայտումները:

Ատենախոսության թեմայի ընտրությունը և բացահայտումների հրատապությունը 33-ում կապված պետության ֆինանսատնտեսական ինքնիշխանության ապահովման և ֆինանսական համակարգի ամենատարբեր ոլորտների իրավախախտումների հայտնաբերման և կանխման գործընթացների հետ, օրվա հրամայական են դարձնում հստակեցնելու, տարանջատելու և բացահայտելու ֆինանսաիրավական պատասխանատվության և վարույթի տեղը և դերը իրավաբանական պատասխանատվության համակարգում:

**Թեմայի գիտական մշակվածության աստիճանը:** Ֆինանսաիրավական պատասխանատվության ինստիտուտը իրավագիտության ոլորտում մեծ վաղեմություն չունի, առավել ևս նորույթ է հայրենական ֆինանսական իրավունք գիտության համար:

Ատենախոսության հիմնախնդիրների լուսաբանմանը մեծ նպաստ են բերել անցյալ դարի ֆինանսական իրավունքի հանրաճանաչ ռուս գիտնականներ Ա.Ա. Իսակի, Վ.Ա. Լեբեդևի, Մ.Ֆ. Օրլովի, Մ.Մ. Սպերանսկու, Ն.Ի. Տուրգենևի աշխատությունները:

Իրավաբանական պատասխանատվության և պետական հարկադրանքի տարբեր տեսակների գիտական հետազոտությունների ոլորտում անգնահատելի ծառայություն են մատուցել իրավագետներ Մ.Մ. Ազարկովը, Ս.Ա. Ալեքսևը, Բ.Տ. Բազիլևը, Դ.Ե. Բախրախը, Ս.Ա. Բրատսոբ, Օ.Ա. Իոֆեն, Ի.Ա. Գալագանը, Ա.Ա. Իվանովը, Մ.Ա. Գուրովիչը,

Օ.Ա. Կրասաձիկովը, Օ.Է. Լեյստը, Մ.Ս. Ստրագովիչը, Մ.Դ. Շարգարոդսկին, Վ.Կ. Մամուտովը, Ս.Է. Կոնդրատևը և այլոք:

Ատենախոսության հիմնախնդրի տարբեր ասպեկտների վերլուծություններին են ուղղված ժամանակակից ֆինանսական իրավունքի տեսաբաններ Ն.Մ. Արտեմովի, Ե.Մ. Աշմարինի, Օ.Յ. Բակաևի, Կ.Գ. Բորիսովի, Ա.Վ. Բրիգգալինի, Լ.Կ. Կորոնովայի, Օ.Ն. Գորբունովայի, Ե.Յ. Գրաչևի, Վ.Ի. Գորևի, Ս.Վ. Չապուսկու, Մ.Վ. Կարաևի, Ա.Ն. Գոգրևի, Յ.Ա. Կրոխինի, Ն.Ի. Խիմիչևայի, Ս.Ս. Սատուրովայի, Մ.Ս. Պիսկուտինի, Մ.Դ. Տիպկինի, Ե.Ա. Ռովինսկու, Ա.Ս. Եմեյանովի, Ն.Ի. Չերնոգորի և այլոց աշխատություններում:

Ֆինանսաիրավական հարկադրանքի միջոցների սանկցիաների պատասխանատվության և վարույթի հիմնախնդիրները լուսաբանվել են վարչական իրավունքի գիտության ակադեմիկոս գիտնականներ Դ.Ն. Բախրախի, Ի.Լ. Բակիլոյի, Ի.Ի. Վերեմենկոյի, Յ.Ս. Կազովի, Բ.Մ. Մանոխինի, Ի.Ա. Գալոգանի, Ն.Գ. Սալիշևայի, Յ.Ն. Ստարիլովի, Յ.Ս. Տիխոմիրովի, Վ.Մ. Լազրևի հանրաճանաչ աշխատություններում:

Ատենախոսության թեմայի հիմնախնդիրների լուսաբանման են նվիրված արտասահմանյան երկրների ֆինանսական իրավունքի տեսաբաններ Պ. Վիտտեի, Պ.Մ. Գոդմեի, Ս.Վ. Դժենիսի, Գ. Ելինեկի, Դ. Կոլիսաի, Ա. Լորենի, Վ. Պետտի, Չ.Չ. Խայլի աշխատությունները: Հայրենական իրավագիտության ոլորտում հիմնախնդրի գիտական բացահայտումներին են ուղղված իրավագետներ Ա. Խաչատրյանի, Կ. Երանոսյանի, Ա. Օսիկյանի, Ա. Նիկողոսյանի, Ա. Նամբարյանի, Է. Շաթիրյանի, Ս. Մուրադյանի, Գ. Սուբխայանի աշխատանքները: Բարձր գնահատելով նշված հեղինակների աշխատանքները արձանագրենք, որ Հայաստանում ֆինանսական պատասխանատվության հիմնահարցերի վերաբերյալ առանձին բազմակողմանի և համալիր գիտական հետազոտությունները բացակայում են: Սույն աշխատանքը նպաստելու է առկա բացերը լրացնելուն:

**Ատենախոսական հետազոտության օբյեկտը ˆ առարկան:** Ատենախոսության օբյեկտ են հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են ֆինանսական գործունեության իրավախախտումների նկատմամբ ֆինանսական հարկադրանքի և պատասխանատվության ենթարկելու գործընթացում: Գիտական հետազոտության օբյեկտները տարասեռ են, ընդգրկում են ՀՀ ֆինանսական համակարգի այնպիսի օբյեկտները, ինչպիսիք են բյուջետային, հարկային, բանկային, արժութային, ինչպես նաև արժեթղթերի շուկայի գործունեությունը:

Հետազոտության **առարկա են** հանդիսանում այն կարավան ակտերը, որոնք սահմանում և կարգավորում են ֆինանսական գործունեության ոլորտում պետական հարկադրանքի կիրառման հիմքերը և կարգը, ինչպես նաև ֆինանսական պատասխանատվության և վարույթի գործնական կիրառման կարգը, վերջիններիս զարգացման և կատարելագործման ուղղությունները: Հետազոտության առարկայի շնորհիվ հնարավոր է դառնում բացահայտել ֆինանսական խախտումների նկատմամբ կիրառվող ֆինանսական հարկադրանքի ապարատը և ներգործության միջոցները, որոնց միջոցով այսօր պետության ֆինանսական գործունեության ոլորտում ապահովվում է օրինակակալությունը հանրային ֆինանսների ոլորտում, որի ամենաարդյունավետ մեթոդներից մեկը ֆինանսական պատասխանատվության կիրառման միջոցով ֆինանսաիրավական հարաբերությունների մասնակիցների շահերի իրավական պաշտպանությունն է:

**Ատենախոսական հետազոտության նպատակը ˆ խնդիրները:** Ատենախոսության հետազոտման նպատակը ՀՀ հանրային ֆինանսների ոլորտում պետական հարկադրանքի, ֆինանսական պատասխանատվության և ֆինանսական իրավախախտումների գործերի վարույթի կիրառման իրավական հիմքերի, բովանդակության, ֆինանսաիրավական սանկցիաների տեսակների, դրանց կիրառման արդյունավետությունը և կատարելագործման ուղիների միանգամայն նոր գիտական մեթոդաբանությամբ բացահայտումն է, նորմատիվային կարգավորման կատարելագործումը:

Հիշատակված նպատակին հասնելու համար ատենախոսությունում առաջադրվում են հետազոտման ենթակա տասնյակ խնդիրներ, որոնցից յուրաքանչյուրը ատենախոսությունում բացահայտված է պետության ֆինանսական գործունեության համապատասխան գործառույթի իրավական կարգավորման առանձնահատկություններով: Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրված են հետազոտման ենթակա հետևյալ **տեսական ֆ գործնական ընտրյալ խնդիրները՝**

1. Իրավական-վերլուծական մեթոդաբանությամբ բացահայտել ֆինանսաիրավական պատասխանատվության հետազոտման ժամանակակից հիմնախնդիրները,
2. Սահմանել ֆինանսաիրավական խախտման հասկացությունը, կազմը և ճյուղային դրսևորման ոլորտները և այլ իրավախախտումներից սահմանազատման առանձնահատկությունները,
3. Բացահայտել ֆինանսաիրավական հարկադրանքի տեսական-իրավական ելակետային առանձնահատկությունները, դրանք սահմանազատել պետական հարկադրանքի այլ տեսակներից,
4. Հետազոտել ֆինանսաիրավական սանկցիաների կիրառման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ ֆինանսական գործունեության ոլորտում,
5. Բացահայտել ֆինանսական իրավախախտումների գործերով վարույթի անհրաժեշտությունը, դրա գործնական կիրառման իրավակարգավորումների առանձնահատկությունները ֆինանսական համակարգի օղակներում, ինչպես նաև մի շարք այլ խնդիրներ, որոնց լուսաբանումները տրված են ատենախոսությունում:

**Թեմայի հետազոտության տեսական հիմքը** կազմում են հանրապետության իրավագետների հիմնախնդրին հարող այլ իրավունքի ճյուղերին ուղղված գիտական հետազոտությունները, ինչպես նաև արտասահմանյան երկրների ֆինանսական իրավունքի հիմնահարցերով զբաղվող տեսաբանների գիտահետազոտական աշխատանքներ, որոնք վերաբերում են ատենախոսության առանձին ասպեկտներին, լույս են տեսնում մենագրություններով, պարբերական ամսագրերի իրապարակումներով և էլեկտրոնային տեղեկատվական ցանցի միջոցով:

Ատենախոսության ելակետային դրույթները, ինչպես նաև եզրակացությունները կատարվել են միջազգային իրավական ակտերի, ՀՀ սահմանադրության, ընթացիկ օրենսդրության, ենթաօրենսդրական, ինչպես նաև հանրապետության Սահմանադրականդատարանի դատական մարմինների պրակտիկ գործունեության արդյունքների վերլուծությունների և կոնկրետ ֆինանսական իրավախախտումների վերաբերյալ ընդունած դատավճիռների, վճիռների և որոշումների արդյունքներից:

**Ատենախոսության առարկայի հետազոտման մեթոդաբանությունը ֆ մեթոդական հիմքերը:** Հիմնախնդրի հետազոտությունը իրականացվել է տնտեսական և հասարակագիտական գիտությունների մի շարք համակարգված մեթոդների, եղանակների և սկզբունքների օգնությամբ: Հետազոտությունում օգտագործվել է դիալեկտիկական մեթոդը որպես իրականության օբյեկտիվ և բազմակողմանի ընկալման եղանակ: Հիմնախնդրի հետազոտությունը կատարվել է համակարգային կառուցվածքային, կառուցվածքային գործառույթային իրավահամեմատական, ձևական տրամաբանական, ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, անալոգիայի, ինչպես նաև ֆինանսական իրավունքի գիտությանը հայտնի այնպիսի մասնավոր ճյուղային մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են վիճակագրական, հաշվառման և վերլուծական մեթոդները:

**Հետազոտության իրավական ֆ փորձառական հիմքերը:** Հիմնախնդրի բացահայտումները լուսաբանված են ՀՀ 2015թ. խմբագրությամբ սահմանադրության, ինչպես նաև արտասահմանյան մի շարք երկրների, գործող սահմանադրությունների ելակետային դրույթների, ՀՀ ֆինանսական և բանկային համակարգի գործու-

ներությունը կարգավորող ՀՀ «Բյուջետային համակարգի մասին», ՀՀ «Կենտրոնական բանկի», ՀՀ «Բանկերի և բանկային գործունեության», ՀՀ «Հաշվեքննիչ պալատի», ՀՀ «Արժույթահին կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» օրենքների, ՀՀ «Քրեական», ՀՀ «Քաղաքացիական», ՀՀ «ԿԻԿ», ՀՀ «Հարկային օրենսգրքերի», ինչպես նաև Սահմանադրական դատարանի և դատական համակարգի մարմինների որոշումների, վճիռների և դատավճիռների հիման վրա:

**Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը:** Պաշտպանության ներկայացված ատենախոսությունը հայրենական ֆինանսական իրավունքի գիտության ոլորտում առաջին համալիր և բազմակողմանի գիտական հետազոտությունն է, որում ֆինանսական պատասխանատվության և վարույթի համաշխարհային հայեցակարգերի պահանջներին համապատասխան ամբողջացվել և գիտահետազոտական միասնական ուսումնասիրությունների լույսի տակ ներկայացվել է ֆինանսական պատասխանատվության օբյեկտիվ առկայությունը, բացահայտվել իրավաբանական պատասխանատվության հայեցակարգում այնպիսի նորույթներ, որոնք ներհատուկ են միայն ֆինանսական պատասխանատվությանը:

Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրների հետազոտման նպատակով ատենախոսությունում **պաշտպանության և ներկայացված գիտական նորույթներ պարունակող հետյալ հիմնադրույթները՝**

1. ՀՀ ֆինանսական գործունեությունն իրավական կարգավորման հիմնավորման ուղղված իրավական հայեցակարգերի առանձին բացերի համալրման նպատակով աշխատանքում հիմնավորված է ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական գործունեությունը որպես հանրային միասնական իշխանության իրականացման ձև, որը որպես իշխանական լիազորությունների ամբողջություն, իրականացվում է այդ նպատակի համար կյանքի կոչված հատուկ մարմինների կողմից, որոնց գործունեության տնօրինման առարկա հանդիսանում են ինչպես տեղական, այնպես էլ հանրային ֆինանսները:

ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական գործունեության նպատակների, խնդիրների իրականացումն ապահովվում է ֆինանսաիրավական գործառույթների միջոցով, որոնք սերտորեն առնչվել են ՀՀ ֆինանսական համակարգի կառավարման կազմակերպման տնտեսական և իրավական հիմքերի, ֆինանսական գործունեության ոլորտում տնտեսական օրենքների արտացոլման ձևերի և մեթոդների առանձնահատկություններով, ինչպես նաև պետական կառավարման այնպիսի սկզբունքային պահանջների ապահովմամբ, ինչպիսիք են օրինականությունը և ֆինանսական կարգապահությունը:

2. Հետազոտված է «Ֆինանսաիրավական հարկադրանք» եզրույթը, որի տակ պետք է հասկանալ ֆինանսաիրավական հարաբերությունների սուբյեկտների կողմից դրսևորվող հակաիրավական վարքագծի նկատմամբ պետական և տեղական լիազոր մարմիններ, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից իրավական ակտերով սահմանված անձնական, գույքային և կազմակերպական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառում, որը նպատակ ունի ապահովել ֆինանսական գործունեության ոլորտում ֆինանսական հարաբերությունների զարգացումը, դրանք զերծ պահելով ֆինանսական խախտումների անցանկալի հետևանքներից:

3. Ֆինանսական իրավախախտման գնահատման հայեցակարգի հիմնավորման նպատակով ատենախոսությունում որպես նորույթ վերլուծված են ֆինանսական հարկադրանքի միջոցները, ըստ որի ֆինանսական հարկադրանքի միջոցներն ունեն ոչ միայն պատժողական, այլև նախագգուշական, վերականգնողական, ինչպես նաև ֆինանսական պարտավորությունների ժամանակին և լրիվ կատարել ապահովող բնույթ, որոնք, պետության ֆինանսական համակարգի կառուցվածքի առանձնահատկություններից շեղելով, կարելի է դասակարգել բյուջետային, հարկային, բանկային, արժույթային հարկադրանքի միջոցների:

4. Հանրային ֆինանսների ոլորտում պետական իշխանության իրացման հար-

կադրանքի և համոզման մեթոդների ձևավորման և իրականացման արդյունավետությունն ներկայացվում է «համոզման» որպես պետական իշխանության արտահայտման և իրացման մեթոդի բովանդակության ձևավորման իրավական նոր հայեցակարգ:

Հայեցակարգի հիմնավորման նպատակով ատենախոսությունում նոր բովանդակությամբ արժեքավորված են համոզման մեթոդի ձևավորման գործում հասարակական կարծիքի ուժով այլ հիմաստավորված նոր արժեքներ:

5. Ֆինանսաիրավական հարկադրանքի յուրահատկությունների սահմանազատման նպատակով, որպես հայեցակարգային նորույթ, արմատավորված է այն իրավական գաղափարը, որ ֆինանսաիրավական հարկադրանքը կարող է կիրառվել անկախ իրավահարաբերության մասնակիցների վարչական ենթակայությունից: Ֆինանսական հարկադրանքի կիրառման առանձնահատկությունն այն է, որ վերջինիս ներգործության շրջանակները բացի օրենքով սահմանված բացառությունների օրենսսահման, ենթակայություն, վերադաս և ստորադասության շրջանակներ չունի, ինչպես ընդունված է վարչական իրավունքում: Այն կիրառվում է ֆինանսական գործունեությանը մասնակցող ցանկացած անձանց նկատմամբ անկախ մեղքի դրսևորման բնույթի:

6. Ֆինանսական իրավունքի տեսական հետազոտություններում առաջին անգամ նախաձեռնվել է սահմանել ֆինանսաիրավական հարկադրանքի գիտական հանկարծության համակարգը և կառուցակարգը: Ֆինանսաիրավական հարկադրանքը բնութագրվում է որպես ֆինանսաիրավական նորմերով սահմանված հարկադրանքի միջոցների ամբողջություն, որոնք կիրառվում են դատական իշխանության, պետության ֆինանսական ապարատի կողմից՝ ֆինանսական գործունեության խախտումները նախագգուշացնելու, կանխելու և խափանելու, ինչպես նաև ֆինանսական հարկադրանքի՝ տույժի միջոցների կիրառմամբ իրավախախտման վտանգավոր հետևանքները վերացնելու համար:

7. Ֆինանսաիրավական պատասխանատվության և վարույթի հիմնախնդրի բացահայտման նորույթ է այն, որ ֆինանսաիրավական հարկադրանքն իրավախախտների դեմ պայքարի անհատական և հասարակական նախականիման ներգործության յուրահատուկ միջոց է: Ֆինանսական հարկադրանքի միջոցով իրավախախտների նախականիմանը ամենօրյա գործունեություն է, որն իրականացվում է գործարհոր իշխանության ոլորտում ֆինանսաբանկային մարմինների կողմից իրականացվող ֆինանսական վերահսկողության և հսկողության միջոցով: Ֆինանսական իրավունքի գիտության մեջ առաջին անգամ ֆինանսական հարկադրանքի կանխիչ միջոցները ենթարկվում են գիտական համակարգման, որոնց թվին են դասվում ֆինանսավորման, վարկերի տրամադրման, դուտացիայի, սուբսիդիաների, սուբվենցիաների դադարեցումը, քաղաքացիների և կազմակերպությունների վարկային հիմնարկներում ունեցած հաշիվների վրա կալանքի սահմանումը, ֆինանսական և արժեթղթերի շուկաներում գործունեության առանձին տեսակների դադարեցումը:

8. Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրների առանցքը ֆինանսաիրավական հարկադրանք արտացոլող ֆինանսաիրավական սանկցիաներն են, որոնք որպես նորույթ գործնականում դրսևորվում են որպես ֆինանսական իրավախախտումների բնույթի, բովանդակության և պատասխանատվության սահմանման չափի միավորներ, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում բացահայտել իրավախախտման հասարակական վտանգավորության աստիճանը և կիրառել ֆինանսաիրավական համահունչ պատասխանատվություն:

Ատենախոսությունում առաջին անգամ ֆինանսաիրավական հարկադրանքի միջոցների բացահայտումների հիման վրա քննարկման է ներկայացվում «ֆինանսական սանկցիաների» հեղինակային սահմանումը, այն համարելով ֆինանսական հարկադրանքի միջոց, որը սահմանված է ֆինանսաիրավական նորմերով, որպես



Ֆինանսական հարկադրանքի չափի և ներգործության սահման, կիրառվում է ֆինանսական իրավախախտում թույլ տված ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ, որպես իրավունքների սահմանափակման միջոց:

Ֆինանսական պատասխանատվության ինքնուրույնության բացահայտման իրավական հիմքը իր առանձնահատկություններով հանդիսանում է ֆինանսական իրավախախտումը, որը կիրառվում է, երբ ֆինանսաիրավական հարաբերությունների սուբյեկտները չեն կատարում ֆինանսական պարտավորությունները, որի համար ենթարկվում են ֆինանսաիրավական նորմի սանկցիայով նախատեսված իրավունքների սահմանափակումներին, քանի որ ֆինանսական համակարգի ցանկացած ոլորտի պարտավորություն ունի հանրային իրավական բնույթ:

Ֆինանսական պարտավորությունների բնույթով է պայմանավորված ֆինանսական պատասխանատվության առանձնահատկությունները, որոնցով այն որակապես տարբերվում է իրավավերականգնողական այնպիսի պատասխանատվության ձևերից, ինչպիսիք են թաղաքացիաիրավական, նյութական և պատասխանատվության այլ ձևերը:

Ֆինանսական պատասխանատվության ինքնուրույնության բացահայտումների հիման վրա ատենախոսությունում որպես նորույթ հեղինակված են մի շարք առանձնահատկություններ, որոնց առանցքը առաջին հերթին պայմանավորված է պետության և նրա լիազոր մարմինների ճյուղային գործունեության յուրահատուկ ոլորտով, որտեղ խոսք կարող է գնալ իրավունքի ոչ բոլոր սուբյեկտների, այլ միայն ֆինանսական իրավունքի սուբյեկտների և դրանց ֆինանսական (բյուջետային, հարկային, բանկային, արժութային) պարտավորությունների մասին:

Ֆինանսական պատասխանատվությունը սահմանազատվում է իրավաբանական պատասխանատվության մյուս տեսակներից նրանով, որ պատասխանատվության այս տեսակը իր բնույթով հանդիսանում է իրավավերականգնողական, որի նպատակը պետության ֆինանսական համակարգին հասցված ցանկացած նեգատիվ և այլ անցանակալի հետևանքների վերացումն է:

9. Ատենախոսությունում հետազոտությունների հիման վրա որպես նորույթ բացահայտված է ֆինանսական իրավախախտների գործերով վարույթի և գործընթացների իրավական կարգավորման առանձնահատկությունները, որոնք ժամանակին և այսօր էլ չեն հետազոտվել ֆինանսական իրավունքի գիտության ոլորտում և որպես բացի հիմնավորում մատնացույց է արվում վարչական իրավախախտների գործերի վարույթի և գործընթացի սկզբունքային դրույթներ, որոնց կիրառմամբ առօրյայում ընթացք են տրվում ֆինանսական իրավախախտների գործերին այն դեպքում, երբ ֆինանսական իրավախախտները իրենց բնույթով, առարկայով, օբյեկտով, առավել ևս սուբյեկտների առանձնահատկություններով էապես տարբերվում են վարչական իրավախախտներից և որպես կանոն բացառապես ծագում են համապետական կամ համայնքային կենտրոնացված դրամական ֆոնդերի հավաքման, բաշխման կամ օգտագործման գործընթացներում:

10. Ատենախոսական հետազոտման և գիտական վերլուծության նորույթ է ֆինանսական իրավախախտների վերաբերյալ գործերի վարույթը:

Պետության ֆինանսական գործունեության ոլորտում երբեք փորձ չի կատարվել լուսաբանել պետական, առավել ևս ֆինանսական հարկադրանքը իրացնող մարմինների իրավատնօրինության հիմնահարցը: Փիտակյան հետազոտությունում հեղինակված է իրավատնօրինություն (юрисдикция) հասկացությունը, որից սկիզբ են առնում ինչպես ֆինանսաիրավական խախտումների գործերով վարույթ, այնպես էլ գործընթաց (процесс) հասկացությունները:

«Ֆինանսական իրավատնօրինություն» հասկացությունը կարելի է բնութագրել որպես գործադիր և այլ իրավագոր մարմինների իրավապահ գործունեության ձև, որն ուղղված է ֆինանսական իրավախախտումների թննարկմանը և դրանց առնչությամբ

օրենքով սահմանված ձևերով և կարգով համապատասխան որոշումների ընդունմանը:

11. Ֆինանսական պատասխանատվության հիմնախնդիրների շարքում, որպես նորույթ, որոշակի արժեք են ներկայացնում իրավախախտումների վարույթում կիրառվող հարկադրանքի միջոցները, որոնք իրենց բնույթով, կիրառման հիմքերով առանձնանում են իրավունքի այլ ճյուղերում կիրառվող հարկադրանքի միջոցներից:

Ֆինանսական իրավախախտումների վարույթում կիրառվող հարկադրանքի միջոցներն առաջարկվում է դասակարգել.

1) ըստ կիրառման ոլորտների, որպիսիք ընդգրկում են պետական և համայնքային բյուջետային օրենսդրության խախտումների, հարկային, արժույթային, բանկային, ինչպես նաև արժեթղթերի շուկայի իրավական կարգավորումը,

2) ըստ իրականացվող հարկադրանքի բովանդակության ֆինանսական իրավախախտման վարույթում կարող են կիրառվել անձնական ոչ գույքային իրավունքների սահմանափակման ուղղված հարկադրանքի միջոցներ, ինչպիսիք կարող են համարվել՝ ա) անձին բերման ենթարկելը, բ) անձի զննումը, գ) թննումը և այլն,

3) գույքային իրավունքների սահմանափակման ուղղված հարկադրանքի միջոցներ՝ ա) գույք վեցցնելը, բ) զննելը, գ) գույքի վրա կալանք դնելը, դ) արգելադրումները, ե) փաստաթղթեր և փորձանմուշներ վերցնելը և այլն:

Ֆինանսական իրավախախտումների վարույթը կարգավորող օրենսդրության անկատարության պատճառով հարկադրանքի կիրառման հիմքերը նախատեսված չեն օրենսդրությամբ, որի պատճառով արտենախոսությունում համակարգված վերլուծված են բյուջետային, հարկային, բանկային, արժույթային, ինչպես նաև արժեթղթերի օրենսդրության խախտումների վարույթում կիրառվող հարկադրանքի միջոցները:

12. Ատենախոսությունում պաշտպանության ներկայացված գիտական նորույթների զգալի մասն ուղղված է ՀՀ գործող ֆինանսական օրենսդրության փոփոխություններին, լրամշակմանը, ուժը կորցրած ճանաչելուն, որոնց մի մասի կարգավորման առարկան էապես փոխվել է: Իրավական ակտերի որոշ մասը ժամանակին ընդունվել է լուրջ բացթողումներով, որոնք չեն արտացոլում կարգավորվող հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները: Խոսքը վերաբերում է բյուջետային, բանկային, արժույթային, օրենսդրական կարգավորումներին, հարկային գործող օրենսգրքերին, ինչպես նաև «Հաշվեթևնիչ պալատի» մասին օրենքին:

Գործնականում օրենսդրական կարգավորումներից զուրկ է ֆինանսական իրավախախտումների պատասխանատվության և վարույթի կարգավորումները, որոնք կապված հանրապետության սոցիալ-տնտեսական բարեփոխումների ծրագրերից օրվա խնդիր են դարձնում «բյուջետային» կամ «ֆինանսական օրենսգրքի» անհրաժեշտությունը, որոնց նախագծերի ձևավորման կառուցվածքին կաջակցի սույն ատենախոսությունը:

**Ատենախոսության տեսական նշանակությունը:** Ատենախոսության տեսական նշանակությունը անհրաժեշտություն է իրավունքի համակարգում ստվերում մնացած ֆինանսական իրավունքի գիտության զարգացման համար:

Ֆինանսաիրավական պատասխանատվությունը և ֆինանսական իրավախախտումների գործերով վարույթի իրավական կարգավորման հիմնախնդիրների տեսական լուսաբանումները իրականության ոլորտում տեսանելի են դարձնում ֆինանսաիրավական հարկադրանքի, սանկցիաների, ֆինանսական պատասխանատվության, ինչպես նաև գործընթացային հարկադրանքի առկայությունը, հնարավորություն են ընձեռում միջճյուղային մոտեցում ցուցաբերել ֆինանսաիրավական սանկցիաների և պատասխանատվության ինքնուրույն կիրառման ապահովմանը:

**Ատենախոսական աշխատանքի գործնական նշանակությունը** պայմանավորված է իրավաբանական պատասխանատվության համակարգում ֆինանսական պատասխանատվության որպես նոր տեսակի ֆինանսական համակարգի

իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, դրանց նախագգուշացմանը և կանխարգելմանը: Գործնական կիրառման խնդիրները խիստ նպատակային են, որոնք կարելի է խմբավորել ա) ֆինանսական իրավունքի տեսությունը նոր հայեցակարգով համալրմանը, բ) ֆինանսավարկային և իշխանության մարմինների իրավաստեղծ գործունեության աջակցմանը:

Ատենախոսությունում առաջադրված հայեցակարգերը օգտագործվել են իրավագիտության գծով կազմակերպված միջազգային ինն գիտաարակտիկ կոնֆերանսների Ներկայացված գիտական հոդվածներում, որոնք բոլորն էլ հրատարակվել են տարբեր ժամանակաշրջաններում:

**Չեռագոտության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսական թեման հաստատվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մասնագիտական խորհրդի կողմից: Աշխատանքը կատարվել է ՀՊՏՀ-ի «Իրավագիտության և բաղաբազիտության» ամբիոնում, իսկ քննարկումը կատարվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի «Սահմանադրական և վարչական» իրավունքի ամբիոնում:

Ատենախոսության հիմնարար հայեցակարգային դրույթները արտացոլված են հեղինակի թասվեց գիտական հոդվածներում, վեց ուսումնական ձեռնարկներում և ռուսերեն լեզվով հրատարակված մեկ մենագիր աշխատությունում:

Ատենախոսության կիրառական նորույթները և առաջարկությունները գործնականում լայնորեն օգտագործվել են ընդհանուր տեսական, ճյուղային իրավաբանական դասընթացների, դասախոսությունների, գիտաժողովների, ամբիոնում կարդացված գիտական զեկույցների, ինչպես նաև ֆինանսական, բյուջետային, հարկային, բանկային, արժույթային իրավունքի ճյուղերի վերաբերյալ հրատարակված ուսումնական ձեռնարկներում և ծրագրերում:

**Ատենախոսության բովանդակությունը:** Ատենախոսությունը բաղկացած է Ներածությունից, չորս գլուխներից, որոնցում ներառված են տասնհինգ ենթագլուխներ, եզրակացությունից, օգտագործված գրականության և իրավական աղբյուրների ցանկից:

Ատենախոսության **առաջին գլուխը կրում է «ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական գործունեության իրավական կարգավորման գործիքները»** վերաբերյալ, որտեղ ներառված են չորս պարագրաֆներ:

Ատենախոսության առաջին գլխի բացահայտումներն ամբողջացնում են հիմնախնդրի արդիականությունը, ընդգծելով ֆինանսական գործունեության իրավակարգավորումների անհրաժեշտությունը պետության բազմաձևավ լ ֆինանսական համակարգի իրավախախտումների հայտնաբերման, բացահայտման, ֆինանսական պատասխանատվության և վարույթի իրավաբանական պատասխանատվության համակարգում որպես պատասխանատվության ինքնուրույն միջոցի ճանաչման և արմատավորման գործընթացները:

Ատենախոսության **առաջին գլխի առաջին պարագրաֆը** նվիրված է **«պետության ֆինանսական գործունեությունն որպես պետական միասնական իշխանության իրականացման ձի»** հետազոտմանը:

Ատենախոսության այս պարագրաֆում ելնելով ժամանակակից աշխարհում հարկերի և պարտադիր վճարների, որպես պետության հիմնարար հատկանիշի, դերի և նշանակության անհրաժեշտությունից աշխատանքում առաջ է քաշվում «պետության ֆինանսական իշխանության» տեսությունը և հիմնավորվում է վերջինիս գոյությունը որպես պետական միասնական իշխանության մաս, որը գործնականում իրականացվում է միայն պետության կողմից ֆինանսական գործունեության ամենօրյա գործառույթի միջոցի, որն ուղղված է ՀՀ ֆինանսական համակարգի տարբեր օղակներում դրամական միջոցների հավաքման, բաշխման և վերաբաշխման գործընթացների պետաիշխանական գործունեության կազմակերպմամբ:

Ատենախոսության **առաջին գլխի երկրորդ պարագրաֆում** հետազոտվել է

**«Տնտեսական օրենքների արտագույունը պետության ֆինանսական գործունեության իրավական ձյերի ւ մեթոդների մեջ, դրանց կատարելագործման»** հիմնախնդիրը:

Գործող տնտեսական օրենքների Էության, դրանց դերի և նշանակության գիտական հետազոտությունների արդյունքների բացահայտման նպատակով ատենախոսությունում փորձ է կատարվել պետության ֆինանսական գործունեությունը, դրա իրավակարգավորումները բացահայտել «գործառույթային» գիտական մեթոդական մոտեցմամբ:

Պետության ֆինանսական գործունեության բովանդակության և իրավական կարգավորումների առանձնահատկությունները հուշում են գործառույթները, դրանցից յուրաքանչյուրի անհրաժեշտության հաշվառմամբ այն դասակարգել 1) բաշխման և վերաբաշխման, 2) ֆինանսական պլանավորման, 3) ֆինանսական կանխատեսումների, 4) ֆինանսական կարգավորման, 5) ֆինանսական վերահսկողության, 6) համակարգման գործառույթների, որոնք ֆինանսապլանային իրավական ակտերի կիրառման միջոցով ուղղված են ՀՀ սահմանադրությամբ ամրագրված «սոցիալական» ինդիկսների իրականացմանը: Աշխատանքում փորձ է կատարվել ընդհանուր իրավական ակտերի համակարգից իրենց ֆինանսաիրավական կարգավորման առանձնահատկություններով և կիրառման մեթոդներով սահմանազատել ֆինանսապլանային ակտերը որպես առանձին իրավական ակտերի համակարգ, որոնք բացառապես ուղղված են ֆինանսաիրավական հարաբերությունների կարգավորմանը:

Ատենախոսության առաջին գլխի երրորդ պարագրաֆում քննարկվել է «ՀՀ ֆինանսական համակարգի ինստիտուտների իրավական կարգավորման առանձնահատկությունները», որի բացահայտումների նպատակով ֆինանսական համակարգի հասկացությունը հետազոտվել է երկու առումով:

Լայն առումով ֆինանսական համակարգը քննարկվել է որպես ֆինանսաիրավական ինստիտուտների ամբողջություն, որոնցից յուրաքանչյուրը համեմատաբար ինքնուրույն է և գործում է դրամական ֆունդերի ստեղծման և օգտագործման միայն այդ ոլորտին հատուկ մեթոդներով և ձևերով:

Նեղ իմաստով ֆինանսական համակարգը հետազոտվում է որպես ֆինանսավարկային մարմինների համակարգ, որոնք կոչված են ապահովելու պետության ֆինանսական գործունեությունը տնտեսության առկա բարեփոխումների պահանջներին համապատասխան: Հետևաբար, ֆինանսական համակարգը բացահայտվում է որպես դրամական հարաբերությունների կազմակերպման ձև, ֆինանսաիրավական այնպիսի հարաբերությունների ամբողջություն, որոնք ծագում են պետության դրամական միջոցների հավաքման, բաշխման և վերաբաշխման գործընթացում:

Ատենախոսության առաջին գլխի վերջին չորրորդ պարագրաֆում «Օրինակականության ւ ֆինանսական կարգապահության սկզբունքների դրսևորման իրավական առանձնահատկությունները պետության ֆինանսական գործունեության ոլորտում» փորձ է կատարվել ժամանակի սոցիալ-տնտեսական բարեփոխումների և ՀՀ կառավարության որոշեգրած օրինակականության ամրապնդման և կոռուկցիայի դեմ պայքարի քաղաքականության ծրագրային դրույթների պահանջների կատարման ուղղությամբ նոր բացահայտումների միջոցով ֆինանսական պատասխանատվության և վարույթի տեսության և պրակտիկայի համար ձևավորել նոր հայեցակարգային դրույթներ, որոնք կարմատավորեն «օրինակականության և ֆինանսական կարգապահության սկզբունքների նորովի դրսևորման առանձնահատկությունները պետության ֆինանսական գործունեության ոլորտում»:

Հեղինակվել են ֆինանսական իրավունքի, հատկապես ֆինանսական պատասխանատվության և վարույթի գործընթացը ապահովող նոր իրավական կատեգորիաներ, ինչպիսիք են «օրինակականության ապահովման իրավական երաշխիքներ», դրանց «իրավական» և «ոչ իրավական» դասակարգումները: Գիտահետազոտական բացահայտումների շնորհիվ ֆինանսական իրավունքի գիտության հարստացման նպատակով ատենախոսությունում առաջին անգամ հեղինակվել է «օրինակականության սկզբունքի» իրավաբանական սահմանում, ըստ որի «օրինակականությունը» ժողովրդավարությանը համահունչ օրենսդրության, իրավունքի գերակայության,

ինչպես նաև գործող ֆինանսական օրենսդրության պահանջների կատարման իրավական և ոչ իրավական երաշխիքների համակցություն է: Բացահայտված են «իրավական երաշխիքներ» հասկացությունը, որը առաջարկվում է հասկանալ օրինականության ներքին կառուցվածքի և բովանդակության սահմանման, ամրապնդման և պահանջների վրա անմիջականորեն ներազդող իրավաբանական բնույթի պայմաններ և գործընթացներ: Օրինականության ապահովման ոչ իրավական երաշխիքները օբյեկտիվորեն ձևավորված սոցիալական, տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական պայմաններն են, որոնք անուղղակի ազդեցություն են թողնում ֆինանսական պատասխանատվության ձևավորման և կիրառման գործընթացի վրա:

Օրինականության և ֆինանսական կարգապահության սկզբունքների ներքին կառուցվածքի բացահայտումների հիման վրա ատենախոսությունում հեղինակված է «ֆինանսական վերահսկողության», «հսկողության», ինչպես նաև «դրամով ֆինանսական վերահսկողության» նոր սահմանումներ, ըստ որի ֆինանսական վերահսկողությունը պետք է բանաձևել որպես պետական, ինչպես նաև սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված կազմակերպությունների դրամական միջոցների հավաքման, բաշխման և օգտագործման նպատակահարմարության և օրինականության ապահովման նկատմամբ իրականացնող գործունեություն, որն ուղղված է տնտեսության արդյունավետ զարգացման և ժողովրդի բարօրության ապահովմանը: Առաջարկված հիմնախնդրի լուծման նպատակով անդրադարձ է կատարվել ֆինանսական կարգապահության պահպանման և ամրապնդման սկզբունք բովանդակությանը որպես հսկողության բաղադրամասի, որը ըստ էության ֆինանսաիրավական հարաբերությունների սուբյեկտների ֆինանսական պարտավորությունների ապահովման որոշակի ռեժիմ է:

**Ատենախոսության երկրորդ գլխում բացահայտված են «ֆինանսական հարկադրանք ԶՅ ֆինանսական գործունեության ոլորտում»,** որը ներկայացված է հիմնախնդրի իրավական բովանդակությունը կազմող չորս պարագրաֆներով:

Առաջին պարագրաֆում փորձ է կատարվել պետական հարկադրանքի էության բազմակողմանի հետազոտությունների հիման վրա բացահայտել «ֆինանսական հարկադրանքի հասկացությունը, էությունը և անհրաժեշտությունը ֆինանսական գործունեության մեջ»:

Ատենախոսությունում պետական հարկադրանքի բովանդակության առանցքը կազմող մի շարք իրավական առանձնահատկությունների հետազոտության հիման վրա հարկադրանքի համակարգից առանձնացվել է միայն ֆինանսական հարկադրանքին ներհատուկ այնպիսի իրավական առանձնահատկություններ, որոնք որպես նոր դրույթներ առաջին անգամ են ներկայացվում իրավագետների քննարկումներին:

Ֆինանսական հարկադրանքը ավանդական իրավական հարկադրանքի տեսակներից, ինչպիսիք են թրեական, վարչական, գույքային, կարգապահական հարկադրանքը սահմանազատվում է. 1) ֆինանսական հարկադրանքի օբյեկտով, 2) կիրառվում է, երբ անհրաժեշտություն է առաջանում հատուկ դրամական ֆոնդերի անվնաստերերի վարքագիծ ուղղել իրավական նորմերի պահանջների կատարմանը, 3) ֆինանսաիրավական հարկադրանքը կիրառվում է անկախ իրավափարաբերության մասնակիցների ենթակայությունից, 4) ֆինանսաիրավական հարկադրանքը կիրառվում է արտադատական, ինչպես նաև դատական կարգով, 5) ֆինանսական հարկադրանքի գործողության ոլորտները կապված են միայն պետության ֆինանսական գործունեության իրավախախտումների հետ և ուղղված են տարատեսակ դրամական ֆոնդերի հավաքման, բաշխման և օգտագործման գործընթացներում թույլ տրված ֆինանսական իրավախախտումների նախագգուշացմանը, կանխմանը և խափանմանը, 6) ֆինանսաիրավական հարկադրանքը հիմնականում կիրառվում է կազմակերպությունների նկատմամբ անկախ շահույթի հետապնդումից, քանի որ միայն դրանք են տիրապետում դրամական միջոցների համապատասխան ֆոնդերին, 7) քաղաքացիների նկատմամբ ֆինանսաիրավական հարկադրանք կարող է կիրառվել, եթե հարկադրանքի օբյեկտ են հանդիսանում այս կամ այն ոլորտի ֆինանսական պաշարների հավաքագրումը կամ օգտագործումը, 8) ֆինանսական հարկադրանքը որպես կանոն սահմանվում է միայն ֆինանսաիրավական նորմերով, 9) ֆինանսաիրավական հարկադրանքի խնդիրը ֆինանսական համակարգի իրավական

կարգավորման օրինականության պահպանումն է:

Ատենախոսության հիշյալ գլխի առաջին պարագրաֆում հետազոտվել և ֆինանսաիրավական գիտության մեջ առաջին անգամ բանաձևել է ֆինանսաիրավական հարկադրանքի հասկացությունը, որը բնութագրվում է ֆինանսաիրավական նորմերով սահմանված հարկադրանքի միջոցների համակցություն, որոնք կիրառվում են պետության ֆինանսավարկային, ինչպես նաև դատական իշխանության մարմինների կողմից ֆինանսական գործունեության խախտումները նախագգուշացնելու, կանխելու, խափանելու, ինչպես նաև ֆինանսական տույժերի միջոցների կիրառմամբ հասարակության և պետության համար իրավախախտման վտանգավոր հետևանքները վերացնելու համար:

Ատենախոսությունում ֆինանսական հարկադրանքի յուրահատկությունների հաշվառմամբ փորձ է կատարվել առանձնացնել հարկադրանքի ինքնուրույն միջոցներ, որոնց գոյությունը պայմանավորված է ֆինանսական համակարգի առանձին օղակների առանձնահատկություններով: Այդպիսի միջոցներ են հանդիսանում ֆինանսաիրավական սանկցիաները, որոնց համակարգում իրենց տեսակարար կշռով առանձնանում են ֆինանսական տուգանքները, տույժերը, ֆինանսավորման դադարեցումը, վարկավորման կասեցումը, ֆինանսական աջակցության դադարեցումը, ձեռնարկատիրական գործունեության համար տրված լիցենզիաների գործունեության դադարեցումը և հարկադրանքի այլ միջոցներ: Հիշարկված հարկադրանքի միջոցների հետազոտությունների հիման վրա առաջարկվում է ֆինանսական հարկադրանքի միջոցները դասակարգել. ա) ֆինանսական տույժերի, բ) խափանիչ և գ) նախագգուշական միջոցների:

Ատենախոսությունում անդրադառնալով ֆինանսական խափանիչ միջոցների գործնական նշանակությանը փորձ է կատարվել համակարգել այն, որի թվին են դասվում 1) բյուջետային ծախսերի վրա արգելք դնելը, 2) բյուջետային միջոցների առգրավումը, 3) ֆինանսավորման, դոտացիայի, սուբվենցիայի, սուբսիդիաների դադարեցումը, 4) թաղաքացիների և կազմակերպությունների բանկում եղած հաշիվների արգելադրումը, 5) ֆինանսական շուկաներում որոշակի գործունեության սահմանափակումը և այլ միջոցներ:

Ատենախոսության **երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում հետազոտվում է «Համոզման ֆ հարկադրանքի մեթոդների համակցումը պետության ֆինանսական գործունեության ոլորտում»:** Բոլոր ժամանակներում պետության գործունեության հիմնական լծակը իշխանությունում է: Բացահայտվել է իշխանության հասկացությունը, ըստ որի «իշխանությունը մի կամքի տիրապետում է մյուսի վրա», այլ խոսքով հարաբերություն է, մեկի ենթարկվածությունը մյուսին: Ատենախոսությունում օրվա ինդրի պահանջով ժամանակի «հասարակական կարծիքի» գնահատման լույսի տակ բացայայտել և հեղինակային մեկնաբանություններով սահմանել են սոցիոլոգիական այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են «կարծիք», «պահանջ», «շահ», «նպատակ», «արժեք», «տեղեկատվություն», «հեղինակություն», «վստահություն», «համագործակցություն» հասկացությունները:

Համոզման մեթոդը բացառում է մարդկանց կամքի և գիտակցության վրա հարկադրաբար ներազդելու որևէ դրակորում:

Ֆինանսական գործունեության մեջ հարկադրանքի կիրառումն ունի որոշակի տարբերություններ «համոզման» մեթոդից, չնայած երկուսն էլ ուղղված են ապահովելու պետական իշխանության իրականացումը:

Հարկադրանքն առանձնանում է նրանով, որ ներգործության օբյեկտի վրա ներագրում է հոգեբանական, բարոյական, նյութական, կազմակերպական եղանակներով: Հարկադրանքի միջոցները ըստ ներագրման սուբյեկտների, ինչպես նաև օբյեկտի, կարող են կիրառվել ինչպես թաղաքացիների, այնպես էլ գույքի նկատմամբ: Խոսքը վերաբերում է նաև կոլեկտիվ սուբյեկտներին, մինչդեռ համոզման մեթոդը, ըստ սուբյեկտիվ առանձնահատկության, իր բոլոր եղանակներով ուղղված է միայն մարդուն, ներագրում է նրա գիտակցության, կամքի և ցանկությունների ձևավորման վրա, որպեսզի ապահովվի իրավաչափ գործողությունների դրակորումներ:

Տարբեր են նաև իշխարկված մեթոդների կիրառման իրավական հիմքերը, այսինքն ֆինանսական հարկադրանքը որպես մեթոդ կարող է կիրառվել, երբ սահմանված է իրավական ակտերով (օրենքներ, որոշումներ և այլն):

Ատենախոսության այս **գլխի երրորդ պարագրաֆում** հետազոտվել է «**Ֆինանսահրավական սանկցիաների հասկացությունը, համակարգը, կատարելագործման խնդիրները 33-ում**»: Գործնականում իրավաբանական պատասխանատվության ընկալումները, պատկերացումները ձևավորվում են քրեաիրավական սանկցիաների, (պատասխանատվության) կիրառման լույսի տակ, որը իրավագիտության ոլորտում անկասկած աչքի է ընկնում քրեագիտության համեմատաբար բարձր մշակվածության շնորհիվ, որը չի կարելի ասել իրավունքի շատ ճյուղերի, առավել ևս ֆինանս-սահրավական նորմերի սանկցիաների մասին:

Հանրապետության պատժողական քաղաքականությունը, իրավախախտումների դեմ գործնականում տարվող պայքարը վկայում է, որ աստիճանաբար մեղմվում են քրեաիրավական սանկցիաները, հոգուտ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, պետությանը հասցված վնասի վերականգնման միջոցներով, որի մեծ մասը, ըստ էության, բաժին է ընկնում իրավունքի ճյուղային հարկադրանքի միջոցների կիրառմանը, որոնք ըստ էության ունեն բյուջետային, հարկային, բանկային սանկցիաների ակտիվացման միտում, նպաստելով պետությանը հասցված վնասի վերականգնմանը:

Այսպիսի հարցադրմամբ նկատենք, որ ատենախոսությունում փորձ է կատարվել ֆինանսահրավական նորմի սանկցիաները դասակարգել երկու բնույթի. 1) իրավավերականգնողական և 2) պատժիչ-տուգանքային: Իրավավերականգնողական սանկցիաների խնդիրները՝ պետական բյուջեի, հարկերի, բանկային վարկավորման, արժույթային, արժեթղթերի ոլորտում հասցված դրամական-ֆինանսական վնասների ամբողջական վերականգնումն է, որպես համապետական ֆոնդերի, որոնց հասցված վնասները չունեն անհատական բնույթ և չեն լուծվում որպես կոնկրետ անձին իրավախախտմամբ հասցված վնասներ, որոնց լուծումները կարգավորվում են քրեական, վարչական կամ նյութական պատասխանատվության կիրառմամբ: Ինչ վերաբերում է «պատժիչ-տուգանքային» ֆինանսահրավական սանկցիաներին, ապա դրանց նպատակը՝ իրավախախտումների լրիվ կամ մասնակի կանխումն է:

Անդրադառնալով ֆինանսական սանկցիաների առանձնահատկություններին, ընդգծված է, որ այս սանկցիաները ի մի են բերում, հավաքական են դարձնում տնտեսական, գույքային, ֆինանսական խախտումները նախապես ֆինանսական նորմում ամրագրելով վնասի չափը կոնկրետ գումարով կամ տոկոսային հարաբերությամբ: «Պատժիչ-տուգանքային» սանկցիաները կիրառվում և իրենց հարկադրանք-սպառնալիքը պահպանում են այնքան ժամանակ, քանի դեռ համապատասխան պարտավորությունը չի կատարվել, վնասը չի հատուցվել, որին նոր միայն կարող է հաջորդել իրավունքների վերականգնումը:

Իրավավերականգնողական ֆինանսական սանկցիաների առանձնահատկությունն այն է, որ լիազոր պետական մարմինները օրենքի ուժով չեն կարող իրավախախտին լրիվ կամ մասնակի ազատել հարկադրանքի միջոցների, իրավունքների սահմանափակումից, քանի որ այսպիսի սանկցիաները ուղղված են օրինականության և իրավունքի վերականգնմանը:

Ֆինանսական իրավունքի գիտության մեջ առաջին անգամ անդրադարձ է կատարվել «ֆինանսական սանկցիա» հասկացության և բովանդակության ձևավորման հիմնախնդրի բացահայտումներին, որոնց մասին երբևէ ընդգծումներ չկա թե՛ գիտության և թե՛ ֆինանսական օրենսդրության ոլորտում:

Այսօր, հարկային օրենսգրքի 76-77-րդ գլուխները սահմանում են «հարկային պատասխանատվություն», նշվում են հարկային պատասխանատվության տեսակները (նախագուշացում, տուգանք, տույժ, գույքի բռնագրավում), խոսք չի գնում «սանկցիա» հասկացության մասին:

Ատենախոսությունում փորձ է կատարվել ֆինանսական համակարգը կարգավորող իրավական ակտերում ամրագրված սանկցիաները սահմանազատել վարչական խախտումների համար կիրառվող սանկցիաներից սահմանազատման չափանիշ ընդունելով այն իրողությունը, որ ոչ բյուջեն, ոչ հարկերը կամ բանկային և արժույթային գործառնությունները և դրանց ոլորտում կատարված ֆինանսական իրավախախտումները չեն հանդիսանում վարչական իրավունքի իրավական ինստիտուտներ և դուրս են վարչաիրավական կարգավորումներից:

Կատարված հետազոտությունների արդյունքում պարզ է դառնում, որ ֆի-

նանսական համակարգի խախտումների դեմ պայքարը կարգավորող տասնյակ իրավական ակտեր սահմանում են պատասխանատվություն «առանց մեղքի» դրսևորման, խոսքը ՀՀ «Բյուջետային համակարգի մասին», «Արժութային գործունեության և վերահսկողության» մասին օրենքներն են, ինչպես նաև գործող հարկային օրենսգրքը, որոնք կարևոր չեն համարում մեղքի առկայությունը: Այլ խոսքով առանց մեղքի ֆինանսական պատասխանատվության կիրառումը ֆինանսաիրավական նորմերի սանկցիաների առանձնահատկությունն է, որի գերակա ինդիքը պետությանը հասցված վնասի վերականգնումն է:

Աշխատանքի այս պարագրաֆում բացահայտված է ֆինանսաիրավական նորմի ոչ միայն սանկցիաների առանձնահատկությունները, այլև սանկցիաների գործառույթների արդյունավետության աստիճանը ըստ պետության ֆինանսական համակարգի առանձին ոլորտների: Այսպիսի բացահայտման անհրաժեշտությունը պայմանավորված է իրավագիտության մեջ «իրավական նորմի» գործառույթների մշակվածության բացակայությամբ:

Որպես ֆինանսական սանկցիաների գործառույթային արդյունավետության չափանիշ առաջին անգամ աշխատանքում փորձ է կատարվում ընդգծել հատկապես բյուջեի ոլորտում «ֆինանսական սանկցիայի»-«հանրային գանձարանային (ֆիսկալ) գործառույթային բնույթը, որը ֆինանսաիրավական նորմի «բացառիկ ֆունկցիա է»», այն է կամավորության և հարկադրանքի տարատեսակ ներգործության միջոցներով ապահովել ինչպես պետական, այնպես էլ համայնքային բյուջեների եկամուտների ձևավորման աղբյուրները:

Ֆինանսական սանկցիաների կիրառման գործառույթների արդյունավետության բացահայտումների բնույթին համապատասխան հետազոտվել է նորմում արտահայտված այնպիսի նպատակների արդյունավետությունը, ինչպիսիք են ֆինանսական խախտումների դեմ պայքարի 1) նախագուշացումները և 2) կանխումները: Բացահայտել է դրանցից յուրաքանչյուրի ա) մասնավոր – նախագուշակական նպատակները, այն է. 1) նախագուշացնել նախկինում պատասխանատվության ենթարկված սուբյեկտներին նոր իրավախախտումներ թույլ չտալ, որը, ըստ էության մասնավոր նախագուշացում է և 2) այլ անձանց կողմից ֆինանսական իրավախախտումներ թույլ չտալու հնարավորությունների կանխում, որը իր բնույթով կանխման – համանախագուշացման նպատակ է: Այլ խոսքով ի տարբերություն քրեաիրավական նորմերի սանկցիաների նպատակների, որի իմաստը անհատական նախագուշացում է, այստեղ նկատելի է ինչպես համընդհանուր նախագուշացումը, այնպես էլ համընդհանուր կանխումը:

Բացահայտվով ֆինանսական սանկցիաների նպատակների առանձնահատկությունները նկատենք, որ ֆինանսական գործունեության ոլորտում կարևոր չէ, թե ինչ ձևով է դրսևորվել մեղքը՝ դիտավորությամբ, թե անզգուշությամբ: Այլ խոսքով ֆինանսական սանկցիաների նպատակը համընդհանուր նախագուշացումն է, այսինքն իրավախախտը պատասխանատվություն է կրում բոլոր հետևանքների համար, որոնք ֆինանսական պարտավորությունների չկատարման հետևանքով վնասել են ֆինանսական համակարգը:

Հետևաբար, պատահական չէ, որ ֆինանսաիրավական հարաբերությունները կարգավորող թե՛ նորմատիվ և թե՛ ենթաօրենսդրական ակտերում խոսք չի ասվում «ֆինանսական սանկցիաները վաղաժամկետ դադարեցնելու», «դատվածության» մասին, որոնք ներհատուկ են քրեական իրավունքին և օրենսդրությանը:

Ֆինանսական սանկցիաների կատարելագործմանն ուղղված բացահայտումների ճանապարհով աշխատանքում ընդգծել է այն չափորոշիչները, որոնցով վերջիններս տարբերվում են քրեական, վարչական, ինչպես նաև քաղաքացիաիրավական սանկցիաներից: Այսպես, առաջին տարբերությունն այն է, որ ֆինանսական պատասխանատվության հիմքը ֆինանսական իրավախախտումն է, որը որպես կանոն պայմանավորված է հանրային ֆինանսական պարտավորությունների անտեսման հետ:

Երկրորդ տարբերությունն այն է, որ ֆինանսական սանկցիաները չունեն պատժողական բնույթ, որը ներհատուկ է քրեական և վարչական նորմերի սանկցիաներին: Ֆինանսական սանկցիաներն ունեն բացառապես վերականգնողական բնույթ, ընդ որում ոչ թե անհատական, այլ ուղղված են դրամական ֆոնդերի վերականգնմանը:



Ֆինանսական սանկցիաների տարբերիչ առանձնահատկությունն այն է, որ վերջիններս, ըստ պատասխանատվության սուբյեկտի, ունեն ներգործության լայն շրջանակներ, կիրառվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ (իրավաբանական անձանց) բոլոր բյուջետային կազմակերպությունների, դրանց մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման համակարգի մարմինների վրա: Համեմատական կարգով ընդգծվում է, որ քրեական պատասխանատվություն կիրառվում է միայն ֆիզիկական անձանց նկատմամբ: Հետևաբար, այս առանձնահատկությամբ ևս սահմանազատվում են ֆինանսական սանկցիաները:

Ֆինանսական սանկցիաները տարբերվում են նաև վարչական սանկցիաներից: Այսպես, ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 9-րդ հոդվածում, որտեղ ամրագրված է, որ վարչական պատասխանատվությունը կիրառվում է «կամային, գիտակցված և մեղավորությամբ կատարված գործողության կամ անգործության համար»: Տրամաբանության ուժով դժվար չէ նկատել, որ իրավաբանական անձինք չունեն և զուրկ են սեփական կամային կամ անհատական գիտակցությունից: Այս հիմքերով իրավաբանական անձանց և կազմակերպությունների նկատմամբ անհնար է կիրառել վարչական պատասխանատվություն: Վարչական պատասխանատվության կարելի է ենթադրել միայն նրանց պաշտոնատար անձանց: Այս համեմատականում, քանի որ ֆինանսական պատասխանատվությունը չունի պատժողական բնույթ, կիրառվում է մեղքի բացակայությամբ ապա բոլոր կազմակերպությունների և նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառել են ֆինանսական սանկցիաները: Սանկցիաների կիրառման տարբերություններ կան դատավարության և վարույթի գործնական կիրառման ընթացքում:

Ֆինանսական սանկցիաներն էապես տարբերվում են նաև քաղաքացիաիրավական սանկցիաներից: Տարբերությունն այն է, որ չնայած երկու իրավունքի ճյուղերի նորմերի սանկցիաներն ուղղված են գույքային հարաբերությունների կարգավորմանը, առավել ևս քաղաքացիաիրավական սանկցիաներով կարգավորվում են գույքային իրավունքներ, որոնց ծագման իրավական հիմքը կողմերի կամաարտահայտությամբ կնքված պայմանագիրն է, որի հետևանքը գույքով պատասխանատվության կրումն է, ապա ֆինանսական իրավունքում պատասխանատվության և ֆինանսական պարտավորությունների առաջացումը կապված է միայն օրենքով սահմանված և իշխանակազմակերպական մեթոդների կիրառմամբ պարտավորությունների կատարմանը, որը կատարվում է միայն «դրամական» հատուցմամբ:

Ֆինանսաիրավական սանկցիաները էապես տարբերվում են, քաղաքացիաիրավական սանկցիաներից: Սրանց իրավական հիմքը միայն հանրային-իրավական պարտավորությունների չկատարումն է, որից բխում է ֆինանսական իրավախախտումը:

Տարբերիչ առանձնահատկություն է այն, որ ֆինանսական սանկցիաներ կիրառող սուբյեկտները բազմաթիվ են ըստ ֆինանսական համակարգի կառավարման առանձնահատկությունների (ֆինանսական, հարկային, բանկային մարմին) և որպես վերջին ատյան դատարաններ, մինչդեռ քաղաքացիաիրավական իրավաիրաբերությունների պաշտպանությունը կատարվում է միայն դատարանների միջոցով:

Տարբերվում են նաև պատասխանատվության կիրառման վարույթով: Ֆինանսական իրավախախտումները հիմնականում լուծվում են ֆինանսական վարույթի միջոցով:

Աշխատանքի այս պարագրաֆում ֆինանսական համակարգի տարբեր ոլորտներում տեղ գտած իրավախախտումների բնույթի և հետևանքների կարգավորման նպատակով առաջին անգամ հեղինակված է ֆինանսական սանկցիաների տեսակների դասակարգումը, ինչպիսիք են 1) տուգանքը, 2) տույժը, 3) բյուջետային ֆինանսավորման դադարեցումը, 4) իրավախախտի բանկային հաշիվների դրամական միջոցների դուրս գրումը 5) բյուջետային վարկավորման դադարեցումը, 6) օգնության կարգով տրվող դոտացիաների, սուբսիդիաների, սուբվենցիաների, փոխհատուցումների դադարեցումը, 7) բյուջետային վարկավորման և փոխատվությունների դադարեցումը, 8) արտոնագրերի դադարեցումը, 9) ֆինանսապլանային ակտերի կատարման մասին հաշվետվությունների մերժելը և այլն:

Բացահայտված են հիշարկված ֆինանսական սանկցիաների Եուլթյան, հասկացության և նշանակության հարցերը: Հատկապես առանձնացված է «տուգանքը» որպես սանկցիայի տեսակ, որը կիրառվում է քրեական և վարչական իրավունքում որպես պատժի միջոց, այլ ֆինանսական գործունեության և ֆինանսական համակարգի համար այն իսկ խնդիր է լուծում, որն ունի սուտեսական ֆունկցիա և լայնորեն կիրառվում է որպես դրամական ֆոնդերի վերականգնման միջոց, որի իրականացման իրավունքը վերապահված է պետական բոլոր մարմիններին:

Գիտական հետազոտության **երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում** բացահայտվել է «**Ֆինանսական սանկցիաների (պատասխանատվության) կիրառման արդյունավետության բարձրացման ուղիները** ՀՀ ֆինանսական գործունեության ոլորտում»: Ֆինանսաիրավական սանկցիաների կիրառման արդյունավետության ապահովման նպատակով բացահայտման հիմքում թնայնվել է երկու փոխկապակցված այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են ա) ֆինանսաիրավական սանկցիայի նպատակը և բ) կիրառման արդյունավետությունը:

Ֆինանսական սանկցիաների գործնական արդյունավետության և դրանց վրա ազդող գործոնների արդյունավետության բացահայտումների նպատակով ատենախոսությունում առաջարկվում է ֆինանսական սանկցիայի (պատասխանատվության) արդյունավետությունը բացահայտել 4 բաղադրիչների համակցությամբ: Առաջարկվող գործոններն ունեն 1) վերականգնողական, 2) դաստիարակչական, 3) մասնավոր և 4) ընդհանուր նախագոյուշական ուղղվածություն: Ֆինանսական սանկցիաների գործնական կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով արվում է կոնկրետ առաջարկ: Դրանցից առաջինը ա) ֆինանսական օրենսդրության արդյունավետությունը նպաստող պայմաններ են և բ) ֆինանսական իրավախախտումների դեպքերով կիրառվող սանկցիաների արդյունավետությանը նպաստող պայմանների ճիշտ ընտրությունը և մշակումը, որոնք համակարգված և վերլուծված են աշխատանքում:

Ֆինանսական սանկցիաների կիրառման արդյունավետությունը պայմանավորված է նաև խախտման հայտնաբերման և սանկցիաների կիրառման ժամկետներով: Ֆինանսական գործող օրենսդրությամբ, բացառությամբ հարկային գործունեության, սահմանված չէ, թե երբ կարող է նշանակվել ֆինանսական տույժ:

Առաջարկվում է ելնելով հասարակական և պետական ֆինանսական գերակա շահերից, ֆինանսական իրավական ակտերում խախտումը հայտնաբերելիս «տույժ» սահմանվել 10 օրվա ընթացքում: Հետևությունն այն է, որ ֆինանսական գործող օրենսդրությամբ սանկցիաներ կիրառելու վաղեմության ժամկետներ չեն սահմանվում, որը ցանկացած պահի պետական մարմիններին, նրանց պաշտոնատար անձանց հնարավորություն է ընձեռում դիմելու անօրինականությունների:

Ինչ վերաբերում է ֆինանսական խախտումների գործերով կիրառվող վարչական հարկադրանքի միջոցներից «տուգանքներին», որոնք սահմանված են ՀՀ ՎԻՎ օրենսգրքի մի շարք հոդվածներով, որոնք կիրառվում են արժուպային, հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվություններ չներկայացնելու, հարկերը և պարտադիր այլ վճարները ժամկետներում չվճարելու փաստերի հայտնաբերման դեպքերին, ապա նկատելք, որ այս ոլորտները դուրս են վարչաիրավական կարգավորումներից, քանի որ այս իրավախախտների համար կիրառվող տուգանքները թե՛ կիրառման հիմքերով, թե՛ առարկայով բացառապես ֆինանսաիրավական խախտումներ են, որոնք ծագում են միայն համապետական և տեղական միասնական դրամական ֆոնդերի հավաքման, բաշխման և օգտագործման գործընթացներում, որի ծագման հիմքը ֆինանսական պարտավորություններն են, որոնք սահմանվում են միայն օրենքով: Վարչական և ֆինանսական պատասխանատվության օբյեկտների նույնացումը, այսօր գործող օրենսդրության կիրառման ընթացքում տեղիք է տալիս մարդու իրավունքների լուրջ խախտումների, ծնելով միևնույն իրավախախտման համար «կրկնակի» պատասխանատվություն: Խոսքը վերաբերում է ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 169<sup>1</sup>, 170<sup>3</sup> և մի շարք այլ հոդվածների, որոնք ուղղված են հարկային իրավախախտումների այն դեպքում, երբ ՀՀ «Հարկային օրենսգրքի» 401, 402 հոդվածներով նույն իրավախախտումների համար պատասխանատվություն է սահմանված:

Ավելին, թե՛ քրեական և թե՛ վարչական իրավունքների սանկցիաներով սահման-

ված տուգանքները որպես պատժամիջոց իրենց բնույթով ֆինանսական են, որոնք ունեն դրամական արտահայտություն և որպես տուգանք չեն կարող բռնագանձվել քննչական կամ այլ արժույթային եղանակներով:

Ֆինանսական սանկցիաների կիրառման արդյունավետության բարձրացման վրա ազդող գործոնների հաշվառման և գնահատման նպատակով աշխատանքում փորձ է կատարվել այդ գործոնները դասակարգել՝ 1) կոնկրետ ֆինանսական նորմում արտահայտված գործոններ, 2) իրավակիրառ գործոններ, 3) իրավախախտման գործոններ, 4) ֆինանսական սանկցիայի կիրառման համար սահմանված ներգործման միջոցներ:

Գիտահետազոտական աշխատանքի երրորդ գլխում խնդիր է դրվել բացահայտել «Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները ։ դրանց լուծման ուղղությունները 3-3-ում»: Հետազոտությունների ճանապարհով կանխատեսումների մեթոդի հիման վրա առաջին պարագրաֆում բացահայտվել է «Ֆինանսական պատասխանատվության մեթոդաբանական հիմնախնդիրները և ֆինանսական պատասխանատվության առանձնահատկությունները ներկա ժամանակաշրջանում»: Բացահայտված է ֆինանսական պատասխանատվության անհրաժեշտությունը և արմատավորումը հանրապետության ֆինանսական գործունեության ոլորտում, ընդգծելով ֆինանսական պատասխանատվության կիրառման արդյունավետության և զարգացման հեռանկարները մեր պետության ֆինանսատնտեսական բարեփոխումների ոլորտում:

Ատենախոսության 3-րդ գլխի 1-ին պարագրաֆում բացահայտված է ֆինանսական պատասխանատվության առանձնահատկությունները, որոնք կատարվել են իրավունքի այլ ճյուղերի ընդհանուր օրինաչափությունների հետազոտությունների հիման վրա: Առաջարկվել է երեք պարտադիր պայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարող է խոսք գնալ ֆինանսական պատասխանատվության մասին:

1) Այն իրավախախտումների առկայությամբ, եթե վերջիններս կատարվել են պետության ֆինանսական համակարգի ոլորտում:

2) Ֆինանսական գործունեությունը կարգավորող իրավական ակտում պետք է ընդգծվի պետական հարկադրանքի միջոցների և տեսակների կիրառման կարգը:

3) Իրավական ակտում պարտադիր պետք է սահմանված լինի հակաիրավական գործողության կամ անգործության դադարման կարգը (պրոցեսը կամ վարույթը):

Ֆինանսական պատասխանատվության առանձնահատկությունները արտահայտվում են պետական հարկադրանքի «յուրահատուկ միջոցների» կիրառմամբ, ինչպիսիք են լրացուցիչ արգելքների համակարգը, սահմանափակումները, որոշակի իրավունքներից զրկելը, ընդհուպ մինչև նոր ֆինանսական պարտավորությունների սահմանումը, իսկ առանձին, անհատական իրավախախտումների դրսևորումների դեպքում կիրառվում է թրեական օրենսդրությամբ սահմանված պատժի միջոցներ:

Անդրադառնալով գործնականում ֆինանսական պատասխանատվության կիրառման նորմատիվային-իրավական հիմքերին, ապա ի տարբերություն իրավունքի բոլոր ճյուղերի այն վրա է հասնում միայն այն դեպքերում, երբ «ֆինանսական պարտավորությունները չեն կատարվում»:

Նման դեպքերում նորույթ պետք է համարել «նոր պարտավորության» համար կիրառվող պատասխանատվության «պահը», որը առաջանում է տվյալ պահին արձանագրված ֆինանսական խախտման համար, և այս յուրահատկությամբ սահմանազատվում են ֆինանսական պատասխանատվություն նախատեսող մյուս իրավական ակտերից:

Գործող «Հարկային օրենսգրքի» մի շարք հոդվածներ այսօր ակնհայտ են դարձնում ֆինանսական պատասխանատվության այն հիմնական առանձնահատկությունները, ըստ որի, այս պատասխանատվությունը անկախ ֆինանսական պարտավորության չափից ուղղված է հասցված վնասի վերականգնմանը, իսկ անհատիության դեպքում ֆինանսական օրենսդրությամբ սահմանված կարգով, առանց վարչական միջոցների գործադրման կիրառել «գույքի արգելանքի միջոցներ», որը ընդգծում է ֆինանսական պատասխանատվության ինքնուրույն կիրառումը առանց վարչական տույժերի, գործի ղեկավար ֆինանսական պարտավորությունների կատարումն ապահովող գույքի, բանկային հաշիվների, դրամարկղում առկա կանխիկ դրամի վրա արգելանքի սահմանումը կամ արգելանքի միջոցները փոխարինել ա) գրավի, բ) երաշխիքի, գ)

հարկ վճարողի պահանջի իրավունքի զիջման միջոցների կիրառման:

Ֆինանսական պատասխանատվության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ վերջինս տարբերվում է պատասխանատվության ենթակա սուբյեկտների կազմով: Ֆինանսական պատասխանատվության են ենթակա պետության ֆինանսական գործունեությանը մասնակցող բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք, բոլոր կազմակերպությունները, հիմնարկները:

Քաղաքացիական և ֆինանսական պատասխանատվության սահմանազատումների նպատակով ընդգծվում է, որ քաղաքացիարավական պատասխանատվությունը պարտադիր չէ, որ կրի իրավախախտման ռատապարտելու պահանջ, այն կարող է իրականացվել առանց հարկադրանքի, քանի որ քաղաքացիական իրավունքում պատասխանատվության նպատակը մինչև խախտումը եղած դրույթան վերականգնումն է ըստ շահերի հաշվառման: Քաղաքացիական պատասխանատվությունը չի հանգեցնում լրացուցիչ պարտականությունների առաջացման:

Քաղաքացիական պատասխանատվությունը դրսևորվում է գույքային բնույթի գրկանքի ձևով, այսինքն վնաս պատճառողը վճարում է վնասի արժեքը կամ մյուս կողմին փոխանցում վնասին համարժեք գույք, դրանով իսկ ինքն իրեն գրկելով դրամական կամ գույքային միջոցներից:

Այնուհետև, որպես ֆինանսական և քաղաքացիարավական պատասխանատվությունների տարբերություն հետագոտվել է մեղքի, պատճառական կապի տարբերությունները, որոնք քաղաքացիական իրավունքում քննարկվում են արտապայմանագրային վնասի պատասխանատվության տեսանկյունից, որոնք որևէ ընդհանրություն չունեն ֆինանսարավական պատասխանատվության հետ, քանի որ ի տարբերություն քաղաքացիական պատասխանատվության ֆինանսական իրավունքում էական չէ պարտավորության չկատարման հարցում մեղքի դրսևորման անհրաժեշտ պայմանները:

Քաղաքացիարավական պատասխանատվությունը էապես տարբերվում է ֆինանսական պատասխանատվությունից նաև ծագման հիմքերով, ինչպիսիք են կողմերի համաձայնությամբ սահմանված պայմանագրային և արտապայմանագրային հարաբերակցությունները, որտեղ կողմերից յուրաքանչյուրը գործում է սեփական շահերի ապահովման նպատակներից, մինչդեռ ֆինանսական պատասխանատվության հիմքը միայն օրենքի հիման վրա առաջացած ֆինանսական պարտականությունն է:

Ֆինանսական պատասխանատվությունը քաղաքացիական պատասխանատվությունից սահմանազատվում է նաև պատասխանատվության ենթակա սուբյեկտների կարգավիճակով: Խոսքը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձանց քաղաքացիարավական պատասխանատվությանը: Այսպես, ՀՀ քաղ.օր.-ի 1062 հ. համաձայն «Իրավաբանական անձը հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունը կատարելիս պատճառած վնասը»: Ֆինանսական օրենսդրությամբ, օրինակ, հարկային, բյուջետային, հարկային գործակալը ինքն է կրում պատասխանատվությունը, այն այլ անձանց չի փոխանցվում:

Քաղաքացիական իրավունքում գործում է «խառը մեղքի» պատասխանատվությունը, մինչդեռ ֆինանսական պատասխանատվությունում բացառվում է երկկողմ պատասխանատվության կիրառման հանգամանքը:

Վերը հիշարկված բացահայտումների և իրավական համեմատությունների հիման վրա արձանագրված են ֆինանսական պատասխանատվության առանցքային յուրահատկությունները: Այսպես՝

- ֆինանսական պատասխանատվությունն ունի պետության ֆինանսական գործունեության ճյուղային ոլորտ, որտեղ խոսք կարող է գնալ միայն ֆինանսական իրավունքի սուբյեկտների ֆինանսական պարտավորությունների մասին:

- ֆինանսական պատասխանատվության առանձնահատկությունը վերջինիս վերականգնողական բնույթն է, որի խնդիրը հասարակության և հանրային ֆինանսական համակարգի կայունության ապահովումն է:

- ֆինանսական պատասխանատվությունը իրացվում է ֆինանսական հարկադրանքի միջոցների կիրառմամբ ըստ ներգործության օբյեկտի:

- ֆինանսական պատասխանատվությունը կիրառվում է «ֆինանսական սանկցիաների» որոշակի համակարգի միջոցով, որոնք սահմանազատվում են մյուս

իրավունքի ճյուղերի նորմերի սանկցիաներից:

- Ֆինանսական պատասխանատվությունը ի տարբերություն պատասխանատվության այլ տեսակների ունի առաջնային-սկզբնական բնույթ, այն հանդես է գալիս ֆինանսական պարտավորության հետ, անբաժան է նրանից:

- Ֆինանսական պատասխանատվության համար եական է ֆինանսական իրավախախտման բնույթը, կիրառվել է ճյուղային ֆինանսական պատասխանատվություն, որից և կախված է իրավախախտման գործերով վարույթի կազմակերպման առանձնահատկությունները:

Հիշարկված բացահայտումների հիման վրա ատենախոսությունում բանաձևված է ֆինանսական պատասխանատվության հեղինակային սահմանումը:

Ատենախոսության **երրորդ գլխի երկրորդ պարագրաֆը** նվիրված է **«Ֆինանսահրավական իրավախախտման հասկացության առանձնահատկությունների և կազմի»** հիմնախնդիրների բացահայտումներին, դրանց առանձնահատկություններին, ծագման հիմքերին:

Ֆինանսական գործունեության ոլորտում իրավախախտման բնույթը պայմանավորված է ֆինանսական պարտավորություններ սահմանող իրավական ակտերով, որոնք գործնականում կարող են ունենալ իրավունքի մեկ այլ ճյուղին ներհատուկ վարքագծի կանոններ և պատկանել իրավունքի այլ ճյուղի կամ ենթաճյուղի, ինչպիսիք են օրինակ ֆինանսական գործունեության ընթացքում կարգավորող բյուջետային, հարկային, բանկային կամ արժույթային բնույթի իրավախախտումները:

Ֆինանսական իրավախախտումների բացահայտումների հիման վրա ատենախոսությունում հեղինակված է «հարկային իրավախախտման» հասկացությունը և առաջարկվում է լրամշակել ՀՀ «Հարկային օրենսգրքի» 397-րդ հոդվածի 1-ին մասը, Նշելով, որ հարկային օրենսդրությամբ (հարկային իրավախախտում) պետք է համարել պետական և տեղական դրամական ֆոնդերի սահմանված ժամկետներում, նախապես հաստատված դրույթաչափերով հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների գանձմանն ուղղված հակահրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որը խոչընդոտում է հարկային օրենսդրության պահանջների կատարմանը:

Իրավախախտման կազմի առանձնահատկություններով պայմանավորված առաջին անգամ ֆինանսական իրավախախտումները տարանջատվում են երկու խմբի. 1) նյութական կամ ունեցող և 2) նյութական կամ չունեցող, որոնց հիմնավորման համար վկայակոչվում է հարկային օրենսգրքի մի շարք հոդվածներ (403, 404, 406, որոնք ունեն նյութական կազմ): Ինչ վերաբերում է ոչ նյութական կազմ ունեցողներին, պարզ դարձնելու նպատակով նշվում է հարկային օրենսգրքից, օրինակ, «Անապարհաշիջվարկային փաստաթղթեր դուրս գրելը», որտեղ կոնկրետ տուգանք կամ տույժ չի սահմանվում:

Ֆինանսական իրավախախտման կազմի բացահայտումները վկայում են, որ վերջինս իր առանձնահատկություններով դուրս է իրավախախտման կազմի համընդհանուր հայեցակարգերի ընդհանուր օրինաչափություններից: Խոսքը վերաբերում է ֆիզիկական անձին իրավական պատասխանատվության ենթարկել, իրավական հիմքերից՝ «գործունակությանը», որը քաղաքացուն ցանկացած տեսակի իրավական պատասխանատվության ենթարկելու հիմնական չափանիշն է: Ֆինանսական պատասխանատվության և իրավախախտման բացահայտումները վկայում են, որ ֆինանսական համակարգի կարգավորմանն ուղղված որևէ իրավական ակտում ֆինանսական պատասխանատվության հիմքում չջրանցվում է «ֆինանսաիրավական գործունակության» պահանջը: Անտեսվում է տարիքային ընդգծումը, անհասկանալի է, թե քաղաքացին իրավախախտման համար որ տարիքից է ենթակա ֆինանսական պատասխանատվության:

Ֆինանսական իրավախախտումների կազմի տարրերի հետազոտությունում բացահայտումների կարիք ունի իրավախախտի «սուբյեկտիվ կողմի» հատկանիշի մեկնաբանությունները, որոնց կապակցությամբ ժամանակին իրավագիտության ոլորտում արմատավորված բացահայտումները, այսօր դժվարեցնում, նույնիսկ անհնար են դարձնում հատկապես կազմակերպությունների (իրավաբանական անձանց) ֆինանսական պատասխանատվության ենթարկելու հարցերը:

Ֆինանսական պատասխանատվության կիրառման համար գործնականում

սուբյեկտիվ կողմի ժամանակակից հայեցակարգերի կիրառումը, որն ուղղված է իրավախախտի հոգեկան իրավիճակի դրսևորումների գնահատմանը վերաբերում է միայն ֆիզիկական անձին:

Իրավաբանական անձը որպես առանձին անհատների կոլեկտիվ միավորում բացառում է իրավախախտման դեպքում վերջիններիս «մեղքի» անհատականացումը, հետևաբար սուբյեկտիվ կողմի տեսանկյունից անհնար է «կոլեկտիվ մեղքի» և «կոլեկտիվի հոգեկան» վիճակի գնահատման փաստը: Այս է պատճառը, որ քրեական, վարչական իրավունքի ճյուղերում պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի դիրքերից, իրավախախտման դեպքում թիրախավորվում է կազմակերպության պաշտոնատար անձը կամ անձանց պատասխանատվության ենթարկելու հանգամանքը:

Ֆինանսական պատասխանատվության կիրառումը հարկային իրավախախտումները հիմնավորելու համար մեր օրենսդրությունը ձևավորվել է Ռուսաստանի Դաշնության հարկային օրենսգրքի 28-րդ հոդվածով սահմանված սկզբունքներին համապատասխան, արդարացնելով իրավաբանական անձանց ֆինանսական, վարչական պատասխանատվության ենթարկելու ինդիքը, կազմակերպության օրինական ներկայացուցիչների գործողությունը կապած հարկային հարաբերությունների հետ համարվում է այդ կազմակերպության գործողությունը: Նման անհիմն փոխառությունները, հատկապես ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի նոր նախագծում կատարվում է հիմնավորելու իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու իրավական կարգավորումներում:

Ընդգծենք, որ այս դիրքորոշումները վաղուց բացահայտված և ամրագրված են գործող քաղաքացիական օրենսդրությամբ գույքային պատասխանատվության առանձին տեսակների համար սահմանված պատասխանատվությամբ:

Հետևաբար, առաջարկվում է ՀՀ ՎԻՎ օրենսգրքի նախագծի 16-րդ հոդվածում հավելել, որ իրավաբանական անձից պատասխանատվության են ենթարկվում քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

Իրավաբանական անձանց պատասխանատվության վարչական իրավակարգավորումների հակասությունները ամբողջական դարձնելու նպատակով ընդգծենք, որ ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 8-րդ հոդվածի «անձնական պատասխանատվության» սկզբունքի բովանդակության հիմնարար դրույթները պահանջում են «ֆիզիկական անձին ենթարկել պատասխանատվության միայն իր կատարած վարչական իրավախախտման» համար: Ֆիզիկական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու ելակետային դրույթները համատեղելով իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու նախագծային նոր դրույթների հետ, ակնհայտ է դառնում, որ նախագծում ակնարկվող «իրավաբանական անձի աշխատող», «իրավաբանական անձի անունից» հանդես եկող հասկացությունները վկայում են ոչ թե իրավաբանական անձի պատասխանատվության մասին, այլ այն անձանց մասին, որոնց մեղքով կատարվել է իրավախախտումը: Ավելին, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու նախագծային դրույթների սնանկության մասին է վկայում նաև քաղ.օր.-ի 57-րդ հոդ. 3-րդ մասի բովանդակությունը, որն անդրադառնալով «իրավաբանական անձի մարմնին», հասկացությունը պարզորոշ է դարձնում ոչ թե իրավաբանական անձի որպես կոլեկտիվ սուբյեկտի ամբողջական պատասխանատվությունը, այլ պատասխանատվության սուբյեկտ է ճանաչվում ֆիզիկական անձին – անհատին նշելով, որ «անձը (անհատը)», որը օրենքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ հանդես է գալիս նրա անունից պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ (նկատենք, որ այստեղ էլ ողջամտությունը չի կարող լինել կոլեկտիվ): Նա պարտավոր է իրավաբանական անձի հիմնադիրների պահանջով հատուցել իր կողմից իրավաբանական անձին պատճառած վնասները:

Իրավաբանական անձանց ֆինանսական պատասխանատվության ենթարկելու բացահայտումների հիմքում ֆինանսական, վարչական և քաղաքացիական իրավունքի ճյուղերով սահմանված պատասխանատվության ինստիտուտի համեմատական վերլուծությունների հիման վրա առաջարկվում է քաղաքացիական օրենսգրքի 60-րդ հոդվածի պահանջները, ըստ որի իրավաբանական անձը իր պարտավորությունների համար «պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ

գույքով» տարածել իրավաբանական անձանց ֆինանսական պատասխանատվության կիրառման գործընթացներում:

Ատենախոսության այս բաժնում փորձ է կատարվել, որպես էական առանձնահատկություն զուգահեռների միջոցով առանձնացնել ֆինանսական պարտավորությունները չկատարելու հետևանքով ծագած իրավախախտումները – քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու դեպքում ծագած իրավախախտումներից: Ֆինանսական իրավունքի ենթաճյուղերում (հարկային) պարտավորությունները նույնպես ունեն գույքային բնույթ, (օրինակ, անշարժ գույքի կամ եկամուտներից հանձնվող հարկը): Չնայած իրենց բնույթով գույքային հարաբերություններ են, սակայն իրավախախտումների դեպքում ունեն այլ բնութագրեր: Քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը սահմանում է, որ պարտավորության խախտում է այն չկատարելը կամ անպատշաճ կատարելը, մինչդեռ հարկային օրենսգրքի 399-րդ հոդվածը միանշանակ պարտավորության չկատարումը, անկախ կատարման եղանակից – պատշաճ, թե ոչ պատշաճ համարում է ֆինանսական իրավախախտում: Հետևաբար, հարկային պարտավորությունների չկատարման համար «մեղքի» դրսևորումը էական չէ, բոլոր դեպքերում գործ ունենք ֆինանսական իրավախախտման հետ, որը ի սկզբանե ամրագրված է և անբաժան է ֆինանսական պարտավորությունից:

Ատենախոսության երրորդ գլխի երրորդ պարագրաֆը կրում է «**Ֆինանսական պատասխանատվությունը որպես ֆինանսական պարտավորությունների ապահովման իրավական միջոցի առանձնահատկությունները**» վերադասումը: Այս պարագրաֆում առաջադրված հիմնախնդրի բացահայտումներն ուղղված են ֆինանսական պատասխանատվության գործնական կիրառման միջոցով ապացուցել, որ ֆինանսական իրավախախտումների բնույթը, ծագման դրդապատճառներն ունեն իրավական այնպիսի հիմքեր, որոնց առանցքը բացարձակապես ֆինանսական պարտավորություններն են: Հետևաբար, պետության ֆինանսական համակարգին իրավախախտման հետևանքով հասցված վնասների գերակշռ մասը վերականգնվում է ոչ թե քրեական, վարչական պատասխանատվության և դատավարությունների, այլ ֆինանսական պատասխանատվության առօրյա կիրառման միջոցով, որն իր բնույթով էապես տարբերվում է պատիժ – տուգանքային պատասխանատվության միջոցներից:

Անդրադառնալով վարչական պատասխանատվության միջոցով ֆինանսական պարտավորությունների կատարման ապահովմանը նկատենք, որ վերջիններս իրենց բնույթով պատիժ – տուգանքային ներգործության միջոցներ են, որոնք ուղղված են կատարման ոլորտի կոնկրետ իրավախախտումների պատժելիությանը, որոնք դուրս են պետության ֆինանսական գործունեության շրջանակներից, չեն առնչվում միասնական դրամական կենտրոնացված և ապակենտրոնացված ֆոնդերի հետ: Գործնական նշանակության տեսակետից օրվա իրամայական և դառնում ֆինանսական պարտավորությունների կատարման պատասխանատվության միջոցներն հստակ սահմանազատել նաև քաղաքացիաիրավական պարտավորությունների կատարումն ապահովող պատասխանատվության միջոցներից:

Ֆինանսական գործունեության ոլորտում «տուգանքը» և «տույժը» սահմանազատված են գործող օրենսդրությամբ և առավել հիմնավոր ընդգծված են որպես ֆինանսական պարտավորությունները ապահովող հարկադրանքի միջոցներ:

Բացահայտումների շնորհիվ ատենախոսությունում առանձնացված են «տույժի» և «տուգանքի» ֆինանսաիրավական առանձնահատկությունները: Այդպիսիք են՝ ա) ֆինանսաիրավական տույժի նշանակման և կիրառման կարգը բացառապես սահմանվում է օրենքով, բ) տույժը հանդես է գալիս որպես իրավախախտման հետևանք, գ) տույժի կիրառումը հանդես է գալիս ֆինանսաիրավական նորմի սանկցիայի կիրառման հետ, դ) տույժի վճարումը իրականացվում է պետական հարկադրանքի ուժով, ե) տույժի վճարումը ըստ էության լրացուցիչ պարտավորության կատարում է, զ) տույժի կիրառումը իրավախախտի նկատմամբ գույքային բնույթի գրկակի է: Հետևաբար, ֆինանսական իրավունքում տույժը հանդես է գալիս որպես գույքային իրավավերականգնողական պատասխանատվության միջոց: Հավելենք, որ ի տարբերություն քաղաքացիաիրավական «տուգանքի», վերջինս ֆինանսական իրավունքում հանդես է գալիս ֆինանսական պարտավորությունը ժամանակին

կատարելու հարկադրանքի միջոց:

Տույժը որպես ֆինանսաիրավական պարտավորության ապահովման միջոց, որպես կանոն պայմանավորված է միայն վճարման ժամկետի խախտման փաստով, որով սահմանագատվում է ֆինանսաիրավական կարգով նշանակվող տուգանքից, որի նպատակը ֆինանսական պարտավորությունների կատարումն է օրենսդրությամբ սահմանված կարգով: Իրավական իմաստով տույժի բռնագանձման հիմքերը կապված չէ չվճարման պատճառների կամ իրավախախտման սուբյեկտիվ և օբյեկտիվ տարրերի բացահայտման հետ: Տույժի գործնական նշանակությունը ֆինանսական պարտավորությունների սահմանված ժամկետներում չկատարելու դեպքում պատուհանը, նրա ֆինանսական համակարգի առանձին օղակների ժամկետի խախտումով հասցված վնասների վերականգնումն է:

Բացահայտումների շնորհիվ առենախոսությունում փորձ է կատարվում իրավաբանական պատասխանատվության հայեցակարգային դրույթներում հիմնավորել ֆինանսական պատասխանատվության իրավական միջոցների «տուգանքի» և «տույժի» եական առանձնահատկությունները քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական կարգով սահմանվող համանման ներգործության միջոցներից:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառման դեպքում «տույժի և տուգանքի» համար գործում է միասնական իրավական ռեժիմ, ըստ, որի վերջիններս միավորվում են մեկ «տուժանք» հասկացության մեջ, որի հիմնավորման իրավական հիմքը քաղ.օր.-ի 369-րդ հոդվածն է, ըստ որի, տուժանքը (տույժ) համարվում է օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտականը պարտավոր է վճարել պարտատիրոջը պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, ներառյալ կատարման կետանցի դեպքում:

Բացահայտումները հուշում են, որ քաղաքացիական իրավունքում տուգանքի և տույժի սահմանումը ըստ եռլայան գործնական-պայմանագրային փոխհարաբերություններում գույքային իրավահարաբերությունների սուբյեկտներին ստիպում են անշահավետ կյուլական կորուստների հետևանքների սպառնալիքի տակ կատարել պայմանագրային պարտավորությունը:

Նկատելով, որ իրավական հետևանքների տեսանկյունից «տուգանքը», որպես ֆինանսական պատասխանատվության միջոց իր կիրառման նպատակով սահմանագատվում է անգամ ֆինանսական «տույժից», ինչպես վկայում է հարկային օրենսդրությունը, թե՛ տուգանքը և թե՛ տույժը ներառված են մեկ հարկային պարտավորություն հասկացության մեջ: Հետազոտությունները հնարավորություն են ընձեռում ֆինանսական պատասխանատվության մեջ հատուկ սահմանագատել «տուգանքի» գործառնական դերը «տույժից», ըստ ֆինանսական պատասխանատվության ինքնուրույնության աստիճանի, ընդգծելով, որ ֆինանսավարկային տուգանքը իրականացնում է որպես հարկադրական գործառույթ, մինչդեռ տույժի նպատակը հանրային շահերի կրած կորուստների փոխհատուցումն է, որը ևս վկայում է ֆինանսաիրավական պատասխանատվության իրավավերականգնողական բնույթի մասին:

Ֆինանսական պատասխանատվության ոլորտում հիշարկված ներգործության միջոցների «չափի-սահմանի» որոշման հիմքերը և եղանակները նույնպես պատշաճ բացահայտումների կարիք ունեն: Ուսումնասիրությունների հիման վրա առաջարկվում է «տույժի» և «տուգանքի» հաշվարկները իրականացնելիս հիմնվել քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված այն ելակետային սկզբունքների վրա, որով սահմանվում է «պարտապահից գանձել ինչպես տուժանքը, այնպես էլ վնասները»:

Ֆինանսական պարտավորությունների կատարման տեսանկյունից բոլոր գույքային պարտավորություններն ունեն իմպերատիվ պահանջի կատարման բնույթ: Պատահական չէ, որ հարկային գործունեության ոլորտում ցանկացած հարկատեսակի գծով սահմանված է պարտավորության կատարման պահը: Սահմանված ժամկետի խախտումը առաջ է բերում տույժեր, որոնք քաղաքացիները և տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են վճարել յուրաքանչյուր ուշացած օրվա համար օրենքով սահմանված կարգով: Ավելին, ի տարբերություն քաղաքացիաիրավական պարտավորությունների, ֆինանսական օրենսդրությամբ կատարելիս արգելվում է երրորդ անձանց կողմից ֆինանսական պարտավորության կատարումը (բացառությամբ ֆիզիկական անձանց մահվան կամ իրավաբանական անձանց վերակառուցման



ոճաբերի):

Ատենախոսության **չորրորդ գլուխը** կրում է «**Ֆինանսական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի հիմնախնդիրները ՀՀ-ում**» վերտառությունը, որի բովանդակությունը կազմող չորս պարագրաֆներում առաջադրված հիմնախնդիրների բացահայտումները, ելնելով ֆինանսական իրավունքի առանձնահատկություններից, վարույթը ամբողջական դարձնելու նպատակով հետազոտվել են իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի հասկացությունը, խնդիրները, նպատակները, կիրառման սկզբունքները, վարույթի իրավական հիմքերը, վարույթում իրականացվող ֆինանսական հարկադրանքի միջոցների համակարգի առանձնահատկությունները, ինչպես նաև այն մարմինների համակարգը, որոնք օրենքով սահմանված կարգով լիազորված են ֆինանսական իրավախախտումների վերաբերյալ վարույթի իրականացմանը:

Չորրորդ գլխի առաջին պարագրաֆում փորձ է կատարվել բացահայտել «ֆինանսական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի հասկացությունը, խնդիրները, նպատակը և կիրառման սկզբունքները»: Բացահայտված է պետական հարկադրանք և պատասխանատվություն կիրառող մարմիններին վերապահված լիազորությունների հիմքերը, որոնք դրսևորվում են այնպիսի գործընթացային իրավական կատեգորիաների միջոցով, ինչպիսիք են «իրավատնօրինությունը» (юрисдикция), «վարույթը» (производство), «գործընթաց» (процес): Իրավական համընդհանուր նշանակության այս հասկացությունների բովանդակության, դրանց միմյանցից սահմանազատելու բացահայտումներին ուղղված հետազոտությունները չկան, որոնք որոշակիություն կսահմանեն ֆինանսական իրավախախտների վերաբերյալ գործերը քննելիս: Այս է պատճառը, որ ֆինանսական իրավունքի տեսության ոլորտում լուսաբանված չէ այն խնդիրը, թե որ դեպքում է առկա «ֆինանսական գործընթաց» և որ դեպքում «ֆինանսական վարույթ»:

«Ֆինանսական իրավատնօրինությունը» օրենքով կամ այլ իրավական ակտերով համապատասխան պետական մարմիններին վերապահված այն լիազորությունների համակարգն է, որոնց ուժով իրավագործ մարմինները իրենց իրավասության շրջանակներում իրավունք ունեն քննարկելու և գնահատելու իրավական վեճը կամ իրավախախտումը, իրավախախտման բնույթից ելնելով ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառել համարժեք ֆինանսական ներգործության միջոցներ:

«Գործընթաց» հասկացությունը նյութական ֆինանսական իրավունքի կիրառում է, այն կառավարչական գործունեության ձևն է, իսկ գործունեության բովանդակությունը՝ «վարույթ»:

Աշխատանքում փորձ է կատարվել բացահայտել վարույթի իրականացման ենթակայության հարցը: Ղեկավարվելով իրավունքի գործընթացային ճյուղերի սկզբունքներով, առաջարկվում է վարույթի իրականացման հետևյալ ենթակայություն. 1) ֆինանսական իրավախախտման վարույթը պետք է իրականացնի հարկային կամ ֆինանսական այն մարմինը, որտեղ կատարվել է խախտումը: 2) Առանձին դեպքերում գործի քննությունը կարող է կատարվել խախտումը կատարած անձի գտնվելու վայրում, թե՛ նման պայմանները նպաստում են քննությունն առավել արագ և լրիվ վարելուն: 3) ՀՀ պետական եկամուտների կոմիտեն իրավախախտման գործի հանգամանքներից ելնելով իրավունք ունի գործի քննությունը տարածքային հարկային մեկ մարմնից վերցնել և հանձնել մեկ այլ տարածքային մարմնի:

Գործող ֆինանսական օրենսդրությամբ հստակացված չեն ֆինանսական իրավախախտումների գործերով վարույթի նպատակը և խնդիրները: Առաջարկվում է ֆինանսական իրավախախտումների գործերի վարույթի խնդիրների թվին դասել յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրության ճիշտ պահանջներին համապատասխան լուծելը, ընդունված որոշումների կատարումն ապահովելը, ինչպես նաև իրավախախտումների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելը:

Ֆինանսական պատասխանատվության և վարույթի հիմնախնդիրների շարքում առանցքային է վարույթի սկզբունքների համակարգի բացահայտումները, որի կապակցությամբ ատենախոսությունում առաջարկվել և հետազոտվել են ա) օ-

րիակակմության, բ) հրապարակայնության, գ) օբյեկտիվ իրականության բացահայտման, դ) վարույթի մասնակիցների հավաստիության ապահովման, ե) օպերատիվության, զ) անմեղության կանխավարկածը, ինչպես նաև պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքները:

**Ատենախոսության չորրորդ գլխի երկրորդ պարագրաֆում** փորձ է կատարվել պետական մարմինների համակարգում կարգավիճակի իրավական առանձնահատկություններով սահմանազատել «ֆինանսական իրավախախտումների վարույթ իրականացնող պետական մարմինները», որի սահմանազատման հիմքում դրվել է ֆինանսական համակարգի ճյուղի գործառնության (ֆունկցիոնալ) առանձնահատկությունները, որը մասնագիտական իմաստով ապահովում է հանրային ֆինանսների կառավարումը: Առաջարկվում է ֆինանսական իրավախախտումների վարույթը իրականացնող սուբյեկտները դասակարգել հետևյալ խմբերի, որոնցից յուրաքանչյուրը պետք է օժտված լինի ա) իրավական ակտեր ընդունելու, բ) ֆինանսական վարույթի ընթացքը որոշելու, գ) իրավական փաստաթղթեր կազմելու իրավասությամբ:

